Ճանաչել գիմաստութիւն եւ գխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՒԱՐ

27(317)
10.09.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Լусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԸ ՎԵՐԱՍՏԱՆՁՆԵԾ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ

2012թ. հուլիսի 19-ին կայացած նախագահական ընտրություններում համոզիչ հաղթանակ տարավ և Արցախի Հանրապետության նախագահ վերընտրվեց Բակո Սահակյանը: ԼՂՀ Սահմանադրության 67-րդ հոդվածով հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է օրենքով սահմանված կարգով, Ազգային Ժողովի հատուկ նիստում Ժողովրդին տված երդմամբ:

Սեպտեմբերի 7-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի մեծ դահլիճում հրավիրվեց Ազգային Ժողովի հատուկ նիստ՝ նվիրված ԼՂՀ նախագահի պաշտոնի ստանձնման արարողությանը: Ներկա էին ԼՂՀ գործադիր և դատական մարմինների ներկայացուցիչներ, ԿԸՀ անդամները, ՏԻՄ ղեկավարներ, ՊԲ բարձրագույն սպայակազմը, Հայաստանի և Արցախի կուսակցությունների ներկայացուցիչներ, հոգևոր հայրեր, սփյուռքի քաղաքական և հասարակական գործիչներ, Մեծ Հայրենականի ու աշխատանքի վետերաններ, Արցախի ազգային-ազատագրական պայքարի մասնակիցներ, գիտության ու կրթության, մշակույթի, առողջապահության ոլորտների վաստակաշատ գործիչներ, ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին ՀՀ պաշտոնական պատվիրակությունը՝ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, Աբխազիայի Հանրապետության, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության, Հարավային Օսիայի Հանրապետության պատվիրակությունները, Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը, ԼՂՀ երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը, բազմաթիվ հյուրեր ՌԴ-ից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Մերձավոր Արևելքից և այլ երկրներից:

Հատուկ նիստը վարեց ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, որն իր բացման խոսքում նշեց, որ Բակո Սահակյանի ակնհայտ հաղթանակը նախորդ հինգ տարիներին նրա ղեկավարությամբ երկրում իրականացված սոցիալ-տնտեսական և հանրային-քաղաքական բարեփոխումների հանդեպ քաղաքացիական հասարակության գերակշիռ մեծամասնության և սկսածը շարունակելու կամքի արտահայտություն է:

Նիստի բացումը հայտարարվելուց հետո հնչեց Արցախի օրհներգը, որից հետո դահլիճ բերվեց ԼՂՀ պետական դրոշը: Նախագահի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ երդման համար բեմ հրավիրվեց ԼՂՀ վերընտրյալ նախագահ Բակո Սահակյանը: Երդման արարողության համար դահլիճ բերվեցին ԼՂՀ Սահմանադրությունը և 17-րդ դարի Ավետարանը:

Ձեռքը դնելով Ավետարանի և Սահմանադրության վրա՝ Բակո Սահակյանը երդվեց.

- Ստանձնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի պաշտոնը, երդվում եմ՝ անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները, հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ի բարօրություն մեր ժողովրդի:

ԼՂՀ նախագահին օրհնանքի խոսք հղեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Պաշտոնական ելույթով հանդես եկավ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, որն իր խոսքում ընդգծեց, որ գիտակցում է և մեծ պատասխանատվությամբ կկրի նախագահի դժվարին, բայց պատվավոր պաշտոնը: «Ես քաջ գիտակցում եմ, թե ինչ հսկայական պատասխանատվություն եմ վերցնում: Պատասխանատվություն՝ հայրենի երկրի, հարազատ ժողովրդի ճակատագրի համար: Ես պատրաստ եմ ու հաստատակամ կյանքի կոչելու իմ նախընտրական ծրագրի դրույթները Արցախն առաջ տանելու կայուն և համակողմանի զարգացման ճանապարհով: Կշարունակեմ ծառայել մեր հայրենիքի հետագա զորացման ու բարգավաճման գործին, անել հնարավորը, որպեսզի մեր քաղաքացիների կյանքը լինի ավելի բարեկեցիկ ու ապահով»,- խոստացավ ԼՂՀ նախագահը:

Սկսածը շարունակելու կարգախոսով Բակո Սահակյանն առաջարկում է միասին հարթել իրավական պետություն կառուցելու ճանապարհը, և ցանկացած ոտնձգություն կկասեցվի անհապաղ: «Պարտավոր ենք ամրապնդել Արցախի Հանրապետության ազատությունն ու անկախությունը, օրեցօր հզորացնել նրա անվտանգության հիմնական երաշխավոր հանդիսացող Պաշտպանության բանակը: Հայոց բանակը մեր պարծանքն ու հպարտությունն է, մեր հաղթական ոգու լավագույն վկայությունը: Մենք ասել ենք և կրկնում ենք, որ կտրականապես դեմ ենք պատերազմին, որ հակամարտության լուծումը տեսնում ենք միայն խաղաղ կարգավորման ճանապարհով, քաղաքակիրթ երկխոսության միջոցով Արցախի Հանրապետության՝ որպես բանակցությունների լիիրավ կողմի մասնակցությամբ: Միևնույն ժամանակ հայտարարում եմ, որ մեր անկախությունն ու ազատությունը բացառիկ արժեքներ են, և նրանց սպառնացող ցանկացած ոտնձգություն կստանա համարժեք պատասխան:

Մենք պարտավոր ենք ունենալ հզոր ու զարգացող հայրենիք, որը յուրաքանչյուր հայի հպարտությունն է: Երկիր, որտեղ ապրելն ու արարելը պատիվ է յուրաքանչյուր քաղաքացու համար: Ես ավելի քան վստահ եմ, որ մենք կկարողանանք իրականացնել համազգային նպատակներն ու ձգտումները, կկարողանանք, քանի որ արդեն երկու տասնամյակ է՝ համախմբված ու արժանապատվորեն կառուցում ենք մեր հարազատ Արցախը: Եվ կշարունակենք կառուցել միասին՝ հանուն մեր ժողովրդի և նրա հուսալի ապագայի»:

Հանդիսավոր նիստից հետո Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցավ ԼՂՀ զինված ուժերի հանդիսավոր զորաշար՝ նվիրված Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնամուտին:

Սեփ. Լրատվություն

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔ

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, կրթության բնագավառի աշխատողներ

Շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա մեկնարկի և Գիտելիքի օրվա կապակցությամբ:

Սեպտեմբերմեկյան զանգի ղողանջով կրկին ազդարարվեց բոլորիս տոնը: Ձեզ հետ միասին կիսելով տոնի ուրախությունը՝ իմ անկեղծ մաղթանքներն եմ հղում հանրապետության բոլոր դպրոցականներին, հատկապես նրանց, ովքեր առաջին անգամ են ոտք դնում դպրոցի շեմին:

Թող Գիտելիքի օրվա խանդավառությունն ուղեկից լինի ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ մղելով բարձր առաջադիմության և նորանոր հաջողությունների:

ՎԼԱԴԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար

ԲԱՐԻ՛ ԵՐԹ, ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Սեպտեմբերի 1-ը պարզապես ուսումնական տարվա մեկնարկ չէ, այն ավելի խորհրդանշական իմաստ ունի՝ որպես Գիտելիքի և դպրության օր: Կրթության բազմադարյա պատմություն ունեցող հայ ժողովուրդը հատուկ տեղ է տվել գիտելիքին ու դպրությանը, քանզի իրապես



կարևորել է կրթության դերն ու նշանակությունը ազգի գոյատևման գործում: Եվ եթե պատմության ողջ ընթացքում կարողացել ենք ծանր փորձությունների միջով անխափան անցնել, հասնելով մեր անկախ պետականության կերտմանը, ապա դրանում մեծ դեր են խաղացել հայեցի կրթությունն ու դաստիարակությունը: Արցախյան պատերազմի դժնի տարիներին անգամ մեր հանրապետության շատ դպրոցներում շարունակվել են ուսումնական պարապմունքները: Դա վկայումն է եղել մեր ժողովրդի կենսունակության, ով չի վախեցել ռումբերից ու արկերից, ով խիզախորեն մարտնչել է մարտի դաշտում և միևնույն ժամանակ «այբ» և «գիմ» սովորեցրել մատաղ սերնդին: Ու պատահական չէ, որ այսօր Արցախում կրթությունն ու գիտությունը պետության առաջնահերթ խնդիրների շարքում են դասվում: Ամեն տարի կառուցվում կամ վերանորոգվում են դպրոցական շենքեր, արդիականացվում է ուսումնատեխնիկական բազան: Ունենք դպրոցներ, որոնք հիմնականում համապատասխանում են միջազգային չափանիշներին թե՛ շենքային պայմանների առումով, և թե՛ կրթական մակարդակով: Կրկին սեպտեմբեր է, և հանրակրթարաններում նորից հնչում է դպրոցական ուրախ զանգը: Անկեղծ շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ են փոխանակվում, որոնց գլխավոր բովանդակությունը գրի ու գիտելիքի կարևորության շեշտադրումն է: Այդ ամենը նաև քեզ է հասցեագրված, ընթերցող, անկախ նրանից, թե երբ ես ավարտել դպրոցը: Այն շոշափելիորեն կա քո հուշերում, քո զավակի, թոռան կամ զարմիկի մանկական հրճվանքի մեջ: Կարևոր չէ, թե ով է եղել քեզ դասավանդած ուսուցիչը, բայց քեզանից անկախ՝ պատկառանք ես զգում մոտովդ անցնող երջանկաժպիտ այս ուսուցչի նկատմամբ. ախր նա այնքա՜ն նման է քո առաջին ուսուցչին, որի խստապահանջ ձայնը դեռ զնգում է քո ունկերում: Եվ քեզ այնքա՜ն

ծանոթ է այս առաջին դասարանցու հպարտ քայլվածքը. այդպես երբևէ դու էիր քայլում ձեր դպրոց տանող ճանապարհով… Կրկին սեպտեմբեր է, որ սկսվել է Գրի ու դպրության օրով: Ուրեմն սրտանց մաղթենք՝ բարի՜ երթ, նոր ուսումնական:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՄՏԵԼ ԵՆ ՍԱՀՈՒՆ ՀՈՒՆԻ ՄԵՋ

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը օրերս լրագրողներին ներկայացրեց անցած ուստարում համակարգում կատարված աշխատանքներն ու սպասելիքները:

Սեպտեմբերի 1-ին հանրապետությունում իրենց դռները բացեցին 245 դպրոցներ՝ շուրջ 21800 աշակերտների ընդգրկմամբ, որից ավելի քան 2100-ը՝ առաջին դասարանցի: Համակարգում գերակա է համարվում հանրակրթության ոլորտը, որի զարգացումից են կախված մյուս ոլորտների հաջողությունները: Նախարարի տեղեկացմամբ՝ տարվա ընթացքում լրիվությամբ ձևավորվել է հանրակրթության իրավական փաթեթը: 2010թ. ընդունված «Հանրակրթության մասին» օրենքը 2011-ին որոշակի փոփոխությունների ենթարկվեց: Օրենքից բխող կառավարության համապատասխան որոշումները կյանքի են կոչվել, բացի հանրակրթական ուսումնական հաստատությունների կարգավիճակի մասին որոշումից, որով պահանջվում է ունենալ ՊՈԱԿ-ներ: Այսօր այդ հարցը դեռ քննարկման փուլում է: Հավանաբար, այս ուսումնականում օրենքի այդ պահանջը ևս կյանքի կկոչվի: Դրանից հետո կանցկացվի դպրոցների տնօրենների թեկնածուների մրցույթ, նրանց կտրվեն հավաստագրեր: Հաջորդ փուլում կընտրվեն դպրոցական խորհուրդներ, կանցկացվեն տնօրենների ընտրություններ: Հանրակրթության ոլորտի քաղաքականությունը՝ որպես սահմանադրական պահանջ, պարտադիր հիմնական և միջնակարգ կրթություն ապահովելն է: Այս գործընթացում և պահանջվող բարեփոխումների շրջանակներում իրականացվել է 12-ամյա կրթություն, կատարվել են նրա պահանջներից բխող բովանդակային փոփոխություններ՝ ներդրվել են նոր ծրագրեր, չափորոշիչներ, դասագրքեր, նոր մեթոդաբանություն և նոր մոտեցում ու վերաբերմունք աշխատանքի նկատմամբ:12-ամյա կրթությամբ ձևավորված 3 ավագ և 5 հոսքային ուսուցմամբ դպրոցներում ներդրվել են տեղեկատվական համակարգ, ժամանակակից ուսումնանյութական բազա, նոր լաբորատորիաներ, դիդակտիկ նյութեր, հարստացվել է գրադարանային ֆոնդը: Այս տարի թողարկվեցին 12-ամյա ուսուցման եռամյա ավագ դպրոցի առաջին շրջանավարտները: Անդրադառնալով ավագ դպրոցի արդյունքներին՝ Վ. Խաչատրյանն ասաց, որ դրանք սպասվածից ավելի լավ էին: Այս տարի ընդունելության քննություններին մասնակցած դիմորդների 39,2%-ը հոսքային դպրոցների շրջանավարտներ էին, 60,8%-ը՝ ընդհանուր հոսք ավարտածները: Բայց ընդունվածների հարաբերակցությունը հետևյալն է. 63%-ը՝ հոսքային դպրոցներից, 37%-ը՝ ընդհանուր հոսքից: Ընդհանուր հոսքով շրջանավարտներից 449-ը միասնական քննության հայտ չեն մերկայացրել: Նախարարն այստեղ արձանագրեց երկու հանգամանք. ավագ դպրոցի ռազմավարական ծրագիրը, գաղափարն ու ընթացքը ճիշտ են և ողջունելի: Երկրորդ՝ ընդհանուր հոսքով դպրոցներում ճիշտ չի իրականացվում մասնագիտական կողմնորոշումը: Նա դա համարեց համակարգի բացթողումը, քանզի այս հարցերը ճիշտ չեն կարգավորել և յուր ժամանակին կանխատեսել: Առաջադիմությունն ավագ դպրոցում կազմել է 84%, որակը՝ 31%: «Սա առաջընթաց է, հաջողություն չէ: Երբ հասնենք նրան, որ կունենանք 16% «բավարար», մնացածը՝ «լավ» և «գերազանց» գնահատականներ, այդ դեպքում կասեմ, որ ավագ դպրոցը կայացել է: Հիմա ասենք, որ կայացման փուլում է, և գործընթացը հուսադրող է»,- ասաց Վ. Խաչատրյանը: Բայց անհավասար կրթական դաշտ է ստեղծվել: Նախարարը բերեց մի քանի փաստեր: ՀՀ բուհեր ընդունված 84 շրջանավարտներից 63-ը (79%-ը) հոսքային դպրոցից են: Օտար լեզվից գյուղական միջավայրից ոչ մեկը ԱրՊՀ-ի անվճար տեղ չի ընդունվել: ԱրՊՀ 215 անվճար տեղերում 65%-ը հոսքային դպրոցներից են: «Եթե այսպես շարունակվի, անվճար տեղեր կընդունվեն միայն հոսքային դասարանների շրջանավարտները, և գյուղական միջավայրի աշակերտները մրցունակ չեն լինի»,- նկատել տվեց Վ. Խաչատրյանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հանրակրթության ամենացածր՝ նախադպրոցական օղակին: Այսօր հանրապետությունում գործում է 40 մանկապարտեզ, որից 27-ը՝ պետական: Սակայն այս օղակը դեռևս տեղիք է տալիս անհանգստության, չնայած ածի շարժընթացը հուսադրող է. ընդամենը 1,5 տարի առաջ նախադպրոցական տարիքի երեխաների 20%-ն էր ընդգրկված, հիմա 20 %-ով ավելացել է, և դպրոցներում գործող 36 նախապատրաստական խմբերի հետ միասին 2948 երեխա ընդգրկված է նախադպրոցական ցանցում: Բայց, չնայած դրան, այն դեռ վերանգնված համարել չի կարելի: Վ. Խաչատրյանի հավաստմամբ՝ իշխանություններն այս քաղաքականությունը որդեգրել են իբրև հիմնական ուղղություն, և առաջիկայում ամեն ինչ անելու են՝ նախադպրոցական ցանցն ընդլայնելու և վերականգնելու համար: Արդեն սկսված են հ. 4 մանկապարտեզի շինարարական աշխատանքները: Այն լինելու է ամենախոշոր մանկապարտեզը հանրապետությունում (18 խումբ՝ շուրջ 700 երեխայի ընդգրկմամբ): Տարվա ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել տարրական օղակին: Նախարարի խոսքերով՝ 2009-2010 ուսումնական տարում այստեղ գրանցվեց բավական ցածր առաջադիմություն: Փաստը խիստ անհանգստացնող էր, քանզի հիմքն այստեղ է դրվում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ առաջընթաց նկատվեց. արտաքին ստուգումից պարզվել է, որ արդեն 7%-ն է «անբավարար»: Սակայն դեռևս ցածր են միջին օղակի և ընդհանրության մեջ՝ հիմնական դպրոցի որակն ու առաջադիմությունը: Այս ուղղությամբ առաջընթացը շատ աննշան է՝ 1-2%: Օգոստոսյան խորհրդաժողովում խնդիր է դրվել և մշակվել են ծրագրեր այս ուղղությամբ: Վ. Խաչատրյանի խոսքերով՝ իշխանություններն ընդգծված քաղաքականություն են վարում, որպեսզի ոլորտի հիմնախնդիրներն իրենց լուծումն ստանան. դրանցում ընդգծված են շինարարական աշխատանքները: 2011թ. մի շարք նոր դպրոցներ բացեցին իրենց դռները.Մարտակերտի շրջանի Հար-Գոմերի, Վաղուհասի, Մարտունու շրջանի Ջորավանի, Գիշու դպրոցներն՝ իրենց մարզադահլիճներով, Խնուշինակի, Հերհերի, Ասկերանի դպրոցների մարզադահլիճները, Հադրութի շրջանի Արևշատի դպրոցը, Ստեփանակերտի հ. 5 հիմնանորոգված դպրոցը: Այսօր ընթանում են մի շարք դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ և նորերի կառուցում: Ստեփանակերտում շարունակվում է հ. 6 դպրոցի կառուցումը, հունվարին այն վերջապես պատրաստ կլինի: Հ. 3 դպրոցի շենքի հիմնանորոգման մի մասն ավարտվել, և պարապմունքները կսկսվեն, իսկ մյուս երկու մասնաշենքերում աշխատանքները շարունակվում են: Կառուցվում է հ. 1 դպրոցի նոր մասնաշենք: Սակայն, ցավոք, չլուծված է մնում հ. 9 և 10 դպրոցների հիմնանորոգման հարցը: Հ. 6 դպրոցը նոր շենք տեղափոխվելուց հետո նախկին շենքը կհատկացվի մանկապարտեզին, որի շնորհիվ էլ Ստեփանակերտի նախադպրոցական տարիքի երեխաների 80-90%-ը կընդգրկվի մանկապարտեզում: Շարունակվում են ուսումնանյութական բազայի հարստացման աշխատանքները: Կառավարության ֆինանսական միջոցներով ձեռք ենք բերվել ֆիզիկայի 10 լաբորատոր սարքավորումներ, «Ֆյունիկ» հիմնադրամը տրամադրել է քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության 25-ական, և մասամբ՝ աշխարհագրության լաբորատորիաներ: Դպրոցներ են առաքվել 300 գլոբուսներ՝ հայկական (առաջին անգամ): Դպրոցներում և ԱրՊՀ-ում գործում են 4 տասնյակի հասնող տեղեկատվական համակարգեր, և այս կրթօջախները հնարավորություն ունեն հեռահար ուսուցում իրականացնել: Նախարարության անձնահատուկ ուշադրության կենտրոնում է ուսուցիչների վերապատրաստման գործընթացը: Վերապատրաստումներ՝ ոչ միայն այս ուսումնական, այլև առաջիկա 10 տարիների համար՝ հիմք ընդունելով, որ համակարգը բարեփոխվում է, և նոր ծրագրերի, նոր մեթոդաբանության շրջանակներում նաև ուսուցիչը պիտի անընդհատ բարեփոխվի: Վերապատրաստված 900 ուսուցիչներ (ընդհանուրի 20%-ը) օգոստոսին ատեստավորվեցին: ՆՈՒՌ ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 168 դասվարներ: Թե ինչու այս ուսումնականում նոր վերապատրաստումներ չկատարվեցին՝ կապված է այն բանի հետ, որ «Ղարաբաղ Տելեկոմը» չհասցրեց մնացած բնակավայրերում համացանց ապահովել, որը ծրագրի պարտադիր պահանջներից է: Նախարարի խոսքերով՝ հարցն ինքը բարձրացրել է հանրապետության վարչապետի ու նախագահի մոտ՝ խնդրելով նրանց միջամտությունը: «Եթե ունենանք կայուն համացանց, կրթական դաշտում կարող ենք ստեղծել հավասարություն, բայց հիմա անհավասար դաշտ է ստեղծվել գյուղի և քաղաքի միջև, չէ՞ որ համացանցը լավ հնարավորություն է ստեղծում անգամ հեռավար դասախոսություններ, խորհրդակցություններ անցկացնելու համար»,- ասաց Վ. Խաչատրյանը: 89 ուսուցիչներ արդեն գործուղվել են հանրապետության ծայրամասային գյուղեր՝ կառավարության որոշմամբ 50% ավել վարձատրությամբ և բնակարանային պայմանների համար մինչև 20 հազար դրամ հատկացումով, ինչի շնորհիվ ծայրամասային գյուղերն ապահովվում են ուսուցիչ մասնագետներով: Տաղանդաշատ երեխաներին բացահայտելու և խրախուսելու ուղղությամբ նախարարությունը որոշակի աշխատանք է տարել: Օլիմպիադաները համարվում են կարևոր միջոցառումներից մեկը այդ ճանապարհին: 263 աշակերտ մասնակցել է հանրապետական փուլին, որից 73-ը պարգևատրվել է մրցանակային տեղեր շահելու համար. նրանցից 39-ը մասնակցել է ՀՀ օլիմպիադայի եզրափակիչ փուլին: «Սա, կարելի է ասել, մեր ապագա գիտական ներուժն է, որի հետ հույսեր ենք կապում»,- ասաց Վ. Խաչատրյանը: Առհասարակ, շնորհալի երեխաների հանդեպ անհատական մոտեցում է ցուցաբերվում մասնագիտական կողմնորոշման հարցում: Հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները՝ նրանց համար պետպատվերով տեղեր են հատկացվում: Այսօր 16 արցախցի երիտասարդներ սովորում են արտերկրի առաջավոր բուհերում: Այդ նպատակի համար բյուջեով հատկացվել է 96 մլն դրամ:

Վ. Խաչատրյանն անդրադարձավ նաև կրթության մյուս ոլորտներին: Մասնավորապես՝ արհեստագործական կրթությանը. տեղեկացրեց, որ Ստեփանակերտում և Մարտունում գործող արհեստագործական ուսումնարաններում, որտեղ սովորում են 500-ից ավելի երեխաներ, նյութատեխնիկական բազայի հարստացման, վարպետների վերապատրաստման ուղղությամբ բավական աշխատանքներ են տարվել: Մարտունու արհեստագործականը 49 տրակտորիստ է թողարկել՝ ի պատասխան երեք տարի առաջ գյուղնախարարության հնչեցրած ահազանգին՝ ըստ որի, ամենաերիտասարդ տրակտորիստը 55-60 տարեկան է: «Արհեստավորի «պաշտոնը» սկսել է հարգվել»,-ասաց ԿԳ նախարարը՝ տեղեկացնելով նաև, որ ֆրանսահայերի աջակցությամբ Շուշիում արհեստագործական ժամանակակից դպրոց է կառուցվում՝ շինարարական թեքումով, որը 1,5 տարի հետո կբացի իր դռները: Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում ևս իրականացվում են բարեփոխումներ: Այս տարի ԱրՊՀ-ում առաջին կուրսեցիներն արդեն քննություն կհանձնեն թեստային եղանակով՝ համակարգիչների միջոցով, և մարդկային գործոնը կբացառվի: Դեպի բակալավրիատ տանող ճանապարհն անցնում է միասնական քննությունների միջով, այդ թվում՝ մասնավոր բուհերի համար: Սա նույնպես կրթական բարեփոխումներից է: Մասնավոր բուհերին թույլատրվել է միայն հեռակա քննությունների կազմակերպումը, բայց, ինչպես տեղեկացրեց նախարարը, այն կլինի վերջին տարին: Հետբուհական կրթության մասով Արցախի գիտական կենտրոնին անդրադառնալով՝ Վ. Խաչատրյանը տեղեկացրեց, որ վերջերս քննարկել են նրա՝ ՀՀ ԳԱԱ ստորաբաժանումներից մեկը դառնալու հարցը, որպեսզի երկու հանրապետությունների գիտական ներուժն օգտագործվի համատեղ:

Վ. Խաչատրյանն այնուհետև պատասխանեց լրագրողների հարցերին: Մասնավորապես այն հարցին, թե ստեղծված անհավասար կրթական պայմաններին ինչպես են վերաբերվում գյուղերում, նախարարը պատասխանեց, որ օգոստոսյան խորհրդաժողովների կարևոր հարցերից մեկն էլ դա էր: Խնդիր է դրվել դպրոցների տնօրենների առջև՝ այդ հարցով լրջորեն զբաղվել. հանդիպեն համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, հասարակության, ծնողական հանրության հետ, որպեսզի նրանք ներկայացնեն, թե որ համայնքում, աշխարհագրական դիրքից ելնելով, կուզենան ավագ դպրոց ունենալ: Եթե գյուղաշխարհի մարդիկ համաձայնվեն, կազմակերպչական մյուս հարցերը կկարգավորի նախարարությունը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Սահմանից անդին

ԱԶԵՐԱԿԱՆ ՀԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ ԿՐԿԻՆ ԿԴՐՍԵՎՈՐՎԻ՞

Կազմակերպելով Ռամիլ Սաֆարովի արտահանձնումն ու նրան ներում շնորհելով՝ Ադրբեջանը ոչ միայն վերահաստատեց իր գազանային բնույթը, այլև քաղաքական տհասության բացառիկ օրինակ ցույց տվեց աշխարհին: Թերևս ադրբեջանական իշխանությունները լավ էին գիտակցում, որ մարդասպանին հերոսացնելը, մեղմ ասած, դուր չի գա Եվրոպային, սակայն գնացին այդ քայլին: Կա նաև մեկ այլ հանգամանք, որն Ադրբեջանի վերջնական վարկաբեկման պատճառ կարող է դառնալ: Խոսքը Հունգարիային եռամիլիարդ վարկային խոստում տալու և խոստումը չկատարելու մասին է: Միջազգային գործարքներում նման վերաբերմունքը չի հանդուրժվում: Ի վերջո, Ադրբեջանն այն երկիրը չէ, որին կարելի է ներել այդպիսի «չարաճճիության» համար: Բուդապեշտում թերևս այնքան շատ չեն մտահոգված Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների կասեցմամբ, ինչքան Իլհամ Ալիևի կողմից խաբված մնալու փաստով: Հունգարացիներին երեք միլիարդ դոլար վարկը երևի շատ էր պետք, այլապես ինչի՞ պիտի ազգային հողի վրա դաժան սպանություն կատարած անձին նրա հայրենի իշխանություններին հանձնեին, հատկապես երբ Ադրբեջանում Սաֆարովի հետագա պատժակրման վերաբերյալ հստակ երաշխիքներ չկային: Ստեղծված իրավիճակում երկրի վարչապետի հրաժարականը, որին այսօր ձգտում է բուդապեշտյան ընդդիմությունը, դարձյալ չի ապահովի խնդրի հարթ լուծումը:

Ռամիլսաֆարովյան արծարծումները միջազգային մամուլում հաճախակիանում են Ադրբեջանին հասցեագրված սուր սլաքներով, և սա լրջորեն անհանգստացնում է նրան՝ ստիպելով գործի դնել դիվանագիտական ողջ զինանոցը: Այս համապատկերին տարօրինակ է թվում Թուրքիայի լռությունը, որի թաքուն քաջալերանքով էր նրա կրտսեր եղբայրը գնացել միջազգային խաբեության: Առողջ տրամաբանությունը Ադրբեջանի այդ արարքում ողջախոհության որևէ հուշում պարզապես չի անում:

Հայատյացության խորացվող քարոզչությունը հարևան երկրին հասցրել է հոգեգարության: Հոգեգարներն, իհարկե, վտանգավոր արարածներ են, բայց հայկական կողմը վախենալու բան չունի. նման սպառնալիքները նոր չեն մեզ համար: Ինչպես ասում են՝ մենք մեր հարևանին ճանաչում ենք օրորոցից: Ու նաև գիտենք, որ ստորությամբ դրկիցի կյանքը խլող դահիճը, երբ էլ լինի՝ համարժեքորեն պատժվելու է:

Վերջին օրերին Ադրբեջանում անվտանգության լրացուցիչ միջոցներ են ձեռնարկվում Ռամիլ Սաֆարովին «հայկական վրեժխնդրությունից» պաշտպանելու նպատակով: Բոլորովին զարմանալի չի լինի, սակայն, եթե հենց իրենք սատկացնեն ազգօգտակարությունը սպառած Ռամիլին, որպեսզի հայերին հանիրավի մեղադրելով՝ ապակողմնորոշեն միջազգային հանրությանը: Ի դեպ, մեզ վաղուց ծանոթ է սեփական զավակին սպանելով՝ ուրիշին մեղադրելու տիպիկ ազերական սովորույթը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՆՈՐԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Քաշաթաղի շրջանում 2012-2013 ուստարում գործելու են 51 հանրակրթական դպրոցներ, որից Կովսականի քաղաքային համայնքի Կերեն և Գանձայի գյուղական համայնքի Բազմատուս գյուղերինը բացվելու են մոտակայում: Բոլոր կրթօջախներում էլ հնչեց առաջին զանգը, և շուրջ 1700 աշակերտ իր դասարանը մտավ: Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցը բացվել է տարածքի վերաբնակեցման առաջին տարում՝ 1994 թվականին. շրջանի առաջին կրթօջախն է, որտեղ այս ուստարում սովորելու է շուրջ 200 աշակերտ: Ուսուցիչների թիվը՝ 27, մասնագետների պակաս չկա: Առաջին դասարան է ընդունվել 24 աշակերտ, բայց դեռևս նոր դիմողներ կան: 12-րդ և 9-րդ դասարաններում սովորելու են 11-ական աշակերտներ: Անցած ուստարում 12-րդ դասարանում սովորում էր 18 աշակերտ, որոնցից 14-ն արդեն ՀՀ և ԼՂՀ տարբեր բուհերի ուսանողներ են:

Առավոտյան դպրոցի բակը դարձյալ մարդաշատ էր: Ուսուցիչներ, ծնողներ, շրջվարչակազմի ներկայացուցիչներ, կրթության բաժնի աշխատակիցներ՝ բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանի ղեկավարությամբ, հյուրեր, նաև անցած ուստարվա շրջանավարտներ, ովքեր արդեն ուսանող են, բայց եկել էին ևս մեկ անգամ մասնակցելու Գիտելիքի օրվա տոնին:

Աշակերտները՝ գեղեցիկ ծաղիկներով, ժպտերես, դասարան-դասարան՝ դասղեկների ղեկավարությամբ շնորհավորանք էին ընդունում: Դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, շնորհավորելով ԼՂՀ Անկախության հռչակման 21-ամյակի և Գիտելիքի օրվա առթիվ, հույս հայտնեց, որ այս տարի ևս կրթօջախը կունենա հաջողություններ, ինչպես անցած տարիներին: Այնուհետև դպրոցի գովասանագրերով պարգևատրեց անցած ուստարում գերազանց գնահատականներ ստացած աշակերտներին: Գովասանագրերի արժանացան միայն տարրական դասարանների մի խումբ աշակերտներ: Բարձր դասարաններում, բոլորում էլ, իհարկե, կան լավ սովորողներ, խելացի, շնորհաշատ աշակերտներ, սակայն բոլոր առարկաներից, ցավոք, գերազանցիկներ չկան: Շնորհավորանքի խոսք ասաց նաև Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը՝ բոլորին մաղթելով բարին և անամպ երկինք: Ներկաներին անակնկալ մատուցեցին առաջին դասարանների երեխաները՝ արտասանելով բանաստեղծություններ, որոնք սովորել են մանկապարտեզում: Հնչում է զանգը, և աշակերտները ներս են մտնում դպրոց: Սկզբում առաջին դասարանցիներն էին՝ մի տեսակ վախվորած, նույնիսկ կային արտասվողներ: Դպրոցի միջանցքները լցվում են ուրախ աղմուկով: Ինչպես միշտ, առաջին դասը՝ Արիության դասը, այս անգամ էլ վարում են զինվորականները: Շրջանի դպրոցների շեֆությունն արդեն հինգ տարի է՝ վերցրել է առաջին բանակային կորպուսը: Բացի բարձր դասարանների աշակերտներից, ներկա էին ուսուցիչներ, Բերձորի քաղաքապետը: Եվ կորպուսի Ն զորամասի ֆիզիկական պատրաստության բաժնի պետ, մայոր Նաիրի Մանվելյանը ողջունում է դասին ներկա աշակերտներին, շնորհավորում և սկսում դասը, որն աշխարհաքանդ պատերազմի, նրա արհավիրքների և այն զսպելու մասին էր:

Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ

Հարգելի խմբագրություն, առաջին անգամ մուտք գործելով ձեր մտքի տաղավարը՝ չէի կարող իմ երախտագիտության խոսքը չասել իմ սիրելի ուսուցչուհուն, որը տասնամյակներ եղել է մեր կրթօջախի՝ Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության անկրկնելի մասնագետն ու տնօրենը: Իհարկե, խոսքս վերաբերում է իմ ուսուցչուհուն՝ ընկեր Արամյանին, որի վաստակը շատ մեծ է դպրոցի կայացման և սերունդների դաստիարակման գործում, բայց ցավալին այն է, որ մեզ վիճակվեց նրան ճանապարհելու թոշակի և ասելու՝ գնաս բարով…

Սիրելի ընկեր Արամյան, Դուք մայրական կաթնաղբյուրից բացի մեզ պարգևեցիք այն ամենը, ինչ պետք է մարդ կայանալու համար:

Սիրելի մեծ ուսուցիչ, քանի՜-քանի սերունդ եք ընդունել այս կրթօջախը դեռևս խելառ ու անմիտ երեխաների տեսքով և նրանց հրաժեշտ տվել հասուն ու գիտուն պատանիներ դարձած: Համոզված եմ, որ մեզանից ամեն ոք Ձեզանից խլել է կենսունակ մի բջիջ՝ Ձեր դեմքին ավելացնելով մի նոր կնճիռ, Ձեր մազերին՝ մի նոր ճերմակություն…

Սերունդներ, որոնք չէին զանազանում լավը վատից, գեղեցիկը՝ տգեղից. Դուք նրանց լեցուն գիտելիքներով զինեցիք և կյանքի կոչեցիք: Նույնիսկ Արցախյան պատերազմը չկարողացավ Ձեզ վիատել, Դուք մնացիք Ձեր դիրքերում և մեր դպրոցն ու իր անունը ժամանակավոր տեղափոխեցիք այլ վայր՝ նորից իր տեղը վերահաստատելու մտադրությամբ ու հետո այդ մտադրությունն իրականացրիք: Ես չեմ չափազանցնում. երբ մի առիթով հորս հարցրի՝ «Ո՞վ է քո սիրելի ուսուցիչը», նա առանց երկմտելու պատասխանեց. «Ձեր տնօրենը՝ ընկեր Արամյանը»:

Մեր մեծ ուսուցիչ, մենք երախտապարտ ենք Ձեզ այն ամենի համար, ինչ ունենք: Այս տարի ես նույնպես կավարտեմ դպրոցը, ինչպես Դու ավարտեցիր տասնամյակների Քո դպրոցը: Պատահական չեմ ասում Քո դպրոցը, քանի որ այն լիովին Քոնն է: Սիրելի ընկեր Արամյան, Դուք մեր դպրոցի պատմության մեջ այն երևելին եք, ում անունը պետք է ոսկե տառերով գրվի, որ գալիք սերունդներն իմանան Ձեր նվիրվածությունն այս կրթօջախին: Իմ մեծ ուսուցիչ, Դուք խրոխտ քայլերով և բաց ճակատով իրավունք ունեք հրաժեշտ տալու դպրոցին, քանի որ մի ամբողջ կյանք եք նվիրել նրան, բայց համոզված եղեք, որ այն չի գլխատվի, քանի որ Ձեր կրթած ու դաստիարակած աշակերտները շարունակելու են Ձեր գործը և պետք է որ սովորած լինեն տնօրինել այն: Սիրելի ուսուցիչ, ես չեմ սիրում հրաժեշտի պահը, բայց ստիպված եմ ասելու՝ գնաս բարով, միշտ եղիր այդպես երիտասարդ և կենսախինդ:

Դո՛ւ իմ դպրոցի վեհության աստղ,
Ճառագած արև ու անմար արև,
Մտքի կայացման Դու իմ լուսաստղ,
Լիալուսինը մեր կրթօջախի:
Մենք քո խորանի ջահերն ենք պայծառ
Դու հպարտ կանգնիր այդ խորանի դեմ,
Դու խոնարհվելու իրավունք չունես
ջահերի առաջ,
Այդ մենք է, որ միշտ պիտի խոնարհվենք
քո մտքի առաջ:
Դու մեր դպրոցի աստծո պարգև,
Հպարտությունը մեր սերունդների
Այն կաթնաղբյուրը, որից դարմանվում
Ու չեն կշտանում, ծարավը մարում...

Մարե ԲԵԳԼԱՐՅԱՆ
Նախիջեւանիկի միջն. դպրոցի
12-րդ դաս. աշակերտուհի

ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԻ ՀՄԱՅՔԸ

Յոթ տասնյակից ավելի Առաջին զանգի ղողանջ եմ լսել ու հանդիսավոր արարողության մասնակցել, իհարկե, տարբեր մակարդակներ՛ով: Յուրաքանչյուր նոր ուստարվա Առաջին զանգը յուր հմայքն ուներ, իր յուրահատուկ բովանդակությամբ: Իսկ ահա չորրորդ տարին է, ինչ Առաջին զանգի արարողությանը չեմ մասնակցում, կարոտով սպասում եմ 2015-ի սեպտեմբերի 1-ի Առաջին զանգին, երբ իմ ավագ ծոռնիկ Սամվելիկը ոտք կդնի առաջին դասարան: Այսօր ի սրտե շնորհավորում եմ բոլորին նոր ուստարվա կապակցությամբ և ցանկանում խաղաղություն ու ջանադիր աշխատանք, գիտության անհաս բարձունքներին հասնելու ձգտում, և նվիրում եմ այս տողերը.

Առաջին զանգ դպրոցական
Ռահվիրան դու նոր ուստարվա,
Այսօր Արցախիս բյուր մանուկներ
Ձերմ սիրով են կանչիդ եկել՝
Իրենց սիրած ուսուցիչներից
Նոր գիտելիքներ ձեռք բերեն:
Ձիլ զանգ դու, ղողանջիր, այնպես զրնգա,
Արար-աշխարի քնից արթնանա ու
հասկանա, որ
Նորաստեղծ մեր երկրի Աստված
Գանձասարի երկնքում է բազմած...

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

ՏԱՐԻՆԵՐ, ՏԱՐԻՆԵՐ

ՍՐՏԻ ԽՈՍՔ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Հարգարժան Լարիսա Արմենակի

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը ջերմորեն շնորհավորում է Ձեզ՝ 65-ամյա հոբելյանի առթիվ:

Լարիսա Սարգսյանն արդեն 42 տարի է՝ աշխատում է կրթության համակարգում՝ արժանվույնս անցնելով իր ճանապարհը կենսաբանության ուսուցչից մինչև Ստեփանակերտ քաղաքի ուսուցիչների արհմիության նախագահ, այնուհետև՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ, պետական տեսուչ: Դրանք տքնաջան աշխատանքի ոչ դյուրին, բայց արգասաբեր տարիներ են:

Մանկավարժական աշխատանքը նրա սիրած գործն է, կյանքի իմաստը: Լարիսա Սարգսյանի անձնային որակները, բնավորության պարզությունը նրա հետ շփվող յուրաքանչյուրի հարգանքն են հարուցում:

Շնորհավորելով Ձեզ, տիկին Սարգսյան, մաղթում ենք քաջառողջություն, իսկ Ձեր զավակներին ու թոռներին, որոնց նվիրել եք Ձեր կյանքը՝ երջանկություն և բարեկեցություն:

Շնորհակալություն՝ Ձեր աշխատանքի ու բարի սրտի համար:

ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատակազմն ի սրտե շնորհավորում է ԿՊՏ պետական տեսուչ, հայոց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ Գայանե Գրիգորյանին՝ ծննդյան 55-ամյակի կապակցությամբ:

Գայանե Գրիգորյանը աչքի է ընկնում որպես հաստատակամ և նպատակասլաց, պատասխանատվությամբ լի, ուղղամիտ, արդարամիտ և ճշմարիտ, անաչառ ու համեստ անձնավորություն:

Նրա խոսքը տարբերվում է ներքին ուժով, համոզվածությամբ: Ասմունքելու վարպետ է, մարդկային բոլոր լավագույն որակները կազմում են նրա հոգու հարստությունը: Նրանք, ովքեր ճանաչում են Գայանե Գրիգորյանին, բարձր են գնահատում նրա անձնային որակները և երախտապարտ են նրան՝ բազմամյա բարեխիղճ, անխոնջ աշխատանքի համար: Անմիջական է բոլորի հետ, պարզ է, անկեղծ, բարյացակամ, զինված մեծ համբերությամբ:

Գայանե Գրիգորյանը խորապես տիրապետում է իր մասնագիտությանը, գիտի հայ ժողովրդի ավանդույթները, մշակույթն ու կենցաղը: Միշտ շրջապատված է մայրենիի ուսուցիչներով, իր գործընկերներով և վայելում է նրանց սերն ու հարգանքը:

Մեր շատ սիրելի Գայանե՛, շնորհավորելով Ձեզ, ի խորոց սրտի ցանկանում ենք ընտանեկան երջանկություն, ստեղծագործական մեծ հաջողություններ: Թո՛ղ Աստված Ձեզ առողջություն, երկար տարիների կյանք պարգևի:



ԼՂՀ ԿԳ նախարարության կոլեկտիվն ի սրտե շնորհավորում է Մանվել Մխիթարյանին՝ ծննդյան 55-րդ տարեդարձի առթիվ:

Իր կյանքի 28 տարին Մանվել Մխիթարյանը նվիրել է մատաղ սերնդի դաստիարակությանը, ուսուցանել Հայաստանի և Արցախի պատմությունը:

Իր կոչումը նա որոշել է դեռ դպրոցական տարիներին՝ Ստեփանակերտի հ. 1 դպրոցում սովորելու ժամանակ: Նրա մանկավարժական գործունեությունը սկսվեց 1984թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո: Ահա նրա անցած երկարատև ոչ դյուրին ճանապարհը. աշխատանք Ղարմետաքսկոմբինատում, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, նույն դպրոցի կազմակերպիչ (1986), ուսմասվար (1989), տնօրեն (1995): 1999-2007 թթ. ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման բաժնի գլխավոր մասնագետն էր:

Արցախյան պատերազմի տարիներին Մ. Մխիթարյանը հող հայրենիի պաշտպանների շարքում էր: 2011թ. նա պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Վերջին տարիներին Մ. Մխիթարյանը ղեկավարում է կրթության պետական տեսչության բաժինը:

Կրթական հաստատությունների տեսչավորման, դպրոցի ղեկավարության և ուսուցիչների հետ աշխատանքի ընթացքում միշտ զգացվում է նրա բարեկրթությունը, մանկավարժական տակտը, պարզությունը շփման մեջ:

Վերստին շնորհավորելով հոբելյարին՝ ցանկանում ենք նոր հաջողություններ անձնական կյանքում և աշխատանքում:

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարություն

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ

Դաստիարակությունը չի սահմանափակվում դպրոցով:

Վալերի

Մարդկային հասարակության ձեռք բերած հաջողություններն, անշուշտ, կապված են կրթության և ուսման հետ: Չկա մի արժեք, որ իր կարևորությունը չապահովի գիտելիքների կայունությամբ: Մարդկային պատմությունն անցել է տարբեր ճանապարհներով, ապրել բազում փորձություններ ու միշտ էլ համոզվել, որ կյանքի համար պարտական է նրանց, ովքեր սովորեցրել են: Հենց այս գիտակցությունն է ստիպում, որ ոմանք պարտքի խոր զգացումով ու հարգանքի գիտակցմամբ չեն մոռանում այն օջախը, որտեղ ձևավորվում է մարդը որպես անհատ:

Կյանքում ամեն ինչի առաջինը հիշվում է առանձին շուքով, բայց հիշողությունները դրանով չեն սահմանափակվում, ու գալիս է ժամանակ, որ կամա թե ակամա, ինքդ քեզ հաշվետու ես դառնում, ու ծնվում են հուշերը՝ մեկը մյուսին հաջորդելով:

Արդեն երեք տարի է, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի պատմահրավագիտության բաժնի 1991-1992 ուստարվա շրջանավարտները կազմակերպում են հանդիպումներ ընտանիքներով: Թեև արդեն շատ տարիներ են անցել, բայց համերաշխությունն ու ընկերասիրությունն իրենց միասնությամբ կապ են պահել համակուրսեցիների միջև: Համակուրսեցի Արթուր Մոսիյանի նախաձեռնությամբ ստեղծված հանձնաժողովն առաջին հանդիպման պլանը որոշեց իրականացնել Գանձասարում, իսկ հաջորդ տարի մեր հիշողություններով կիսվեցինք Սևանա լճի ափին: Հոբելյանական՝ 20 տարվա տարելիցի կապակցությամբ հանձնաժողովը մշակեց ընդլայնված պլան, որը համակուրսեցիների կողմից հավանությամբ ընդունվեց Գանձասարում նախնական հանդիպման ժամանակ: Երկար սպասելուց հետո նշված օրը՝ օգոստոսի առաջին կիրակին (հանդիպումների հաստատուն օրն է) ամբողջ կուրսով՝ յուրաքանչյուրն իր երկրորդ կեսի հետ հավաքվել էինք Ստեփանակերտում: Պայմանավորվածության համաձայն՝ պիտի այցելեինք համալսարան, որտեղ պիտի հանդիպեինք ԱրՊՀ ղեկավարության և մեր դասախոսների հետ: Շատ տպավորիչ էր, երբ համալսարանի նախաշեմին տեսանք մեզ արդեն սպասող դասախոսներին: Շատերին մի պահ թվաց, թե հերթական անգամ մենք շտապում ենք դասի: Հանդիպումը պաշտոնական էր, բայց երկար տարիների կարոտն առնել առանց ջերմության՝ անհնար էր, ու մենք մեզ, իրոք, զգացինք հարազատ օջախում: Հիշողություններն ինքնին էին գալիս, ու մեկը մյուսին տալով, օգոստոսյան տապը մոռացած, հումորի ուղեկցությամբ պատմում ու պատմում էինք առանց հոգնելու: ԱրՊՀ ռեկտոր Ս. Դադայանի առաջարկությամբ հավաքվեցինք ռեկտորատում, որտեղ փոխանակեցինք ջերմ խոսքեր, այնուհետև հավաքը շարունակվեց հատուկ սրահում: Ս. Դադայանն իր խոսքում հակիրճ ներկայացրեց համալսարանի գործունեությունը մեր ավարտելու հետագա տարիների ընթացքում: Բոլորիս համար ուրախալի էր, որ մայր բուհն ունի նկատելի հաջողություններ թե՛ շինարարական, թե՛ ուսումնական մասով: Իր սրտի խոսքն ասաց պրոռեկտոր Շ. Աբրահամյանը: Յուրաքանչյուրի խոսքը հագեցած էր անսահման սիրով ու իրենց նկատմամբ մեր հարգանքի խոր գիտակցումով: Վերջում Ս. Դադայանը կուրսի բոլոր անդամների անձնական գործերը բաժանեց, ու տեսնել կարելի էր, թե ինչպես միանգամից փոքրացանք քսան տարով, մեզանից ոմանք նույնիսկ արտասվեցին ընդունելության քննության շարադրությունն ընթերցելիս: Հիշողությունները նորից ալիքվեցին, ու փոթորկուն ծովում կեսկատակ-կեսլուրջ վերհիշեցինք անցածը: Ս. Դադայանը մեկ առ մեկ ընթերցեց կուրսի բոլոր անդամների անունները: Ցավոք, մենք ունենք զոհված համակուրսեցիներ, որոնց հիշատակը, ճիշտ է, հարգեցինք մեկ րոպե լռությամբ, բայց նրանց մասին խոսելիս մենք չլռեցինք անգամ մեկ րոպե: Հանդիպումն ավարտվեց նվերների փոխանակմամբ: Բոլորս ստացանք համալսարանի պատմությունն արտացոլող գրքեր, իսկ մենք պատրաստել էինք խորհրդանշական նկար Արարատ լեռան պատկերով՝ հույս ունենալով և արտահայտվելով, որ կգա ժամանակ, երբ հայ ժողովուրդը մի օր կվայելի նրա գեղեցկությունը իրական պատկերով: Այնուհետև շրջեցինք համալսարանի լսարաններով, և առաջին լսարանը որտեղից և սկսեցինք, մեր առաջին դասախոսությունների լսարանն էր: Լսարանից լսարան անցնելով՝ մենք ավելի մեծ ոգևորությամբ ենք լցվում՝ տեսնելով նման հարմարությունները, կահավորանքը, հարուստ գրադարանը... Անչափ ուրախ ենք, որ մեր ուսանողներն ունեն բավական ամուր նյութատեխնիկական բազա՝ բարձր մակարդակով ուսում ստանալու համար:

Հանդիպման հաջորդ վայրը Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին էր, որտեղ մոմ վառելուց հետո նորից եկանք Ստեփանակերտ՝ երեկոյան նույն կազմով հանդիպելու ակնկալիքով: Քիչ հանգստանալուց հետո արդեն համախմբված էինք ճաշկերույթի սեղանի շուրջ: Ա. Մոսիյանը սեղանը բացելուց հետո առանձին ներկայացրեց յուրաքանչյուրին, որից հետո ամեն մեկը արտահայտվեց յուրովի: Ակտիվ էր նաև դասախոսական կազմը, նրանք էլ ունեին հիշողություններ՝ մեզ հետ կապված: Մենք մի ամբողջություն էինք, և յուրաքանչյուրը քրքրում էր իր հիշողությունը՝ դեպք առ դեպք մտաբերելու համար: Մեր ուրախությունն իր գագաթնակետին հասավ պարահրապարակում: Երաժշտության մասը հագեցվեց համակուրսեցի Անահիտ Հակոբյանի ամուսնու և տղայի կատարումներով: Երեկոն աշխույժ էր ու հետաքրքիր: Հազիվ էինք սկսել ապրել ներկայով, երբ համակուրսեցիների կողմից նախապես հավաքված անցյալ տարիների նկարները երևակվեցին լուսաէկրանին: Համակ լռությամբ այն նայել չէր լինի, ու նորից հիշողությունն՝ հիշողություններ...

Երեկոյան բաժանվեցինք՝ առավոտյան նորից հանդիպելու ակնկալիքով: Այս անգամ հանդիպմանը մասնակցելու էին նաև մեր երեխաները: Առավոտյան բոլորս շտապում էինք Գանձասար՝ նշանակված վայրում հանդիպելու համար: Մոմավառությունից հետո մենք ըմբոշխեցինք հայրենի եզերքի գեղեցկությունը: Տեղ հասնելուն պես երեխաները ծանոթացան մեկը մյուսի հետ, և մինչև մի քանի րոպեն նմանվում էինք մի մեծ տան: Կեսօրին մեծ ու փոքր համախմբվեցինք սեղանի շուրջը: Սեղանապետ Ջորիկ Ղուլյանն արտահայտվելու հնարավորություն տվեց բոլոր ընտանիքներին: Ամենահանդիսավոր բաժակաճառը երեխաների պատվին էր: Կուրսն արդեն ունի իր առաջին թոռը՝ փոքրիկ Մարատին, նա էլ որպես առաջինը ստացավ նվեր: Բնության գեղեցկությունը լրացվեց նրա գրկում ծլող-ծաղկող մանուկների երգ ու պարով, աշխույժ ու լիաթոք ծիծաղով: Ընթրիքից հետո կազմեցինք պլան հաջորդ տարի օգոստոսի առաջին կիրակի նորից հանդիպելու համար:

Օրը կամաց-կամաց իր մայրամուտին հասավ, իսկ մեր հանդիպումը մնաց որպես վառ հիշողություն:

Գայանե ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՉԻ ԻՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

(Մասնագիտական-տեսական)

Ուսուցման գործընթացում բազմաթիվ արդիական խնդիրներ կարելի է հնչեցնել:

Իմ համոզմունքով արդիական հնչողություն պիտի ունենա նաև ուսուցչի ապրած կյանքը: Մենք գիտենք, որ մատաղ սերնդի համար կյանքի լավագույն դպրոց են հայոց մեծերի կյանքն ու գործունեությունը՝ սկսած սրբազնագույն Մաշտոցից: Նրանց կենսափորձն ու իմաստությունը, բազում խորհրդածությունները կրթության, գրականության, արվեստի զանազան բնագավառների մասին այսօր էլ գրավիչ իմաստություններ են և արդիական հնչողություն ունեն:

Բայց որքանո՞վ է ուսուցիչն իր իրական կերպարով՝ կյանքով ու գործունեությամբ, իր ապրելակերպով մասնակիցը դառնում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը:

Միշտ էլ փորձել եմ նմանության եզրեր գտնել տվյալ ժամանակաշրջանի, գրական ստեղծագործության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքի, գրողի կամ գրական հերոսի ապրած կյանքի միջև, համոզված, որ դասապրոցեսում դրանք դառնում են մարդկային լավագույն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Ամեն անգամ, երբ աշակերտներին խորհուրդ եմ տալիս, որ գեղեցիկ գրեն, հիշում եմ ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն միտքը, որ ձեռագիրն էլ բնավորություն է ձևավորում: Բայց այսօր այդ ո՞ր մի ծնողը կվարվեր Թումանյանի նման: Երբ նա Վանից ստացել էր տղայի՝ Արտիկի նամակը, առանց կարդալու ետ էր ուղարկել՝ նամակի վրա գրելով. «Գրիր՝ ինչ ես գրել»:

Հետպատերազմյան շրջանի իմ մանկավարժական աշխատանքային գործունեության առաջին տարում, վերջին նստարանին նստած 4-րդ դասարանի աշակերտուհի փոքրիկ Արմինեի պատկերն առայսօր իմ հիշողության մեջ է գամվել. որը ծանր հիվանդությունից հետո մահացավ: Այդ օրերին որքա՜ն սուր զգացի Չարենցի ապրած զգացողությունը, երբ 1919-1920թթ. որպես ուսուցիչ աշխատում էր Կարսի գյուղական դպրոցներից մեկում: Իր աչքի առջև անընդհատ սովից մահանում էին դպրոցի երեխաները: Նրանց դալուկ դեմքերն ամբողջ կյանքում չհեռացան բանաստեղծի մտապատկերից: Շատ լավ հասկանում էի, թե ամեն օր դասամատյանում աշակերտների անունները պակասելուց Չարենցն ինչ սարսափելի լարված վիճակ էր ապրել:

Այդ ուսումնականում ամեն անգամ մտնելով այդ դասարան, որքա՜ն ծանր ապրումներ էի ունենում, երբ դասամատյանում նրա անվան դիմաց դատարկ վանդակներ էի տեսնում:

Երբ Գ. Մահարի եմ անցնում, որը Երևանի որբանոցներից մեկում դասավանդող Չարենցի սանն էր, ցավի զգացողությունը պատում է իմ հոգին, և ամեն անգամ ավելի լավ եմ ընկալում հորս ապրումները, երբ վաղ հասակից, ծնողներին կորցնելով, նրան քրոջ հետ տարան որբանոց: Իսկ երբ գաղթի ճանապարհին պատմում եմ, որ Մահարին քրոջն էր կորցրել, փորձում եմ ամեն անգամ նմանության եզրեր գտնել գրողի և հորս ճակատագրերի միջև: Նա էլ էր քույր կորցրել, որին այդպես էլ չգտավ, քանի որ նրանց տարբեր որբանոցներում էին տեղավորել (տղաների և աղջիկների): Որբանոցային դառը կյանքի մասին մանրամասնություններ այդպես էլ չպատմեց հայրս, բայց մի բան գիտեմ միայն, որ նա Հայաստանի տարբեր քաղաքների որբանոցներում էր եղել: Իրենից մեկուկես տասնամյակ առաջ այդ որբանոցներում ապրած Գ. Մահարին հետագայում իր «Ինքնակենսագրականի» մեջ պիտի գրեր. «1915թ. ես էջմիածին ընկա, հետո՝ Դիլիջան, հետո՝ Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց, մահճակալից մահճակալ…»:

Երբ Հովհաննես Շիրազի կյանքն եմ ներկայացնում, որ մատնվելով որբության՝ իր նման հարյուրավոր անապաստանների հետ սկզբից ևեթ ճանաչեց կյանքի հատակը, մտաբերում եմ հորս պատմածը, որ ադրբեջանական հայաշատ Կիրովաբադ (Գանձակ) քաղաքում, արդեն աշխատունակ, անապաստան նախկին որբանոցային սանն իր փաստաթղթերում փոխված պիտի տեսներ հայկական «յան» վերջածանցը: Բայց «ովը» չկարողացավ տանել իր վրա, այն պիտի դառնար նորից «յան», որ պապենական տոհմը չեղծվեր, այլ դառնար մի մեծ տոհմածառ:

Այդ դասաժամին, հասկանալի է, որ ինձ մոտ նոր հնչողություն պիտի ստանային մեծ բանաստեղծի տողերը.

Ղարաբաղը մորս կանչն է,
Ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է,
Կարմիր, բայց սև ունի սրտում…

Բանաստեղծ Չարենցի «դանթեական դժոխքի» հարցումներն եմ հնչեցնում իմ դասերին. «Ո՞վ հնարեց պատերազմը, ո՞վ դարձրեց կյանքը «թարախակալ երազ», ո՞վ հնարեց այս որբերին, ո՞վ, ո՞վ…»:

Այդ դասերին ինքնաբերաբար նաև հիշում եմ 92-ի ծանր օրերը, երբ առաջին անգամ զգացի պատերազմի հոտը: Հարազատ գյուղում էինք այդ օրերին (Մոխրաթաղ), երբ ռմբակոծությունից հետո մշուշված աչքերիս առջև գետնին փռված տեսա տատիս հաշմանդամ հարևանուհու դիակը…

Երբ 1915թ. Մեծ եղեռնից փրկված գաղթականների մասին եմ խոսում, նորից վերհիշում եմ նույն 92-ի բռնագաղթի օրերը, երբ ես ինքս էլ ոտաբոբիկ, ընտանիքիս հետ անտառամիջյան արահետով փորձում էի մայրաքաղաք տանող փրկության ճանապարհը գտնել… Եվ հառնում է իմ առջև մոտակա գյուղերից եկող «գաղթականների» ստվարացող խումբը, դրանց մեջ քայլելուց հոգնած 84-ամյա տատիս գունատ դեմքն եմ հիշում, որ փորձում էինք փրկել պատերազմ կոչված դահճից: «Ավելորդ» մարդ չկար մեզ համար այդ օրերին, «ավելորդը» Դեմիրճյանի հերոսուհին էր՝ Սրբուհը, որի մասին խոսելիս հիշում եմ նաև ինձ շատ ծանոթ մարդկանց, ովքեր չկարողացան լքել իրենց օջախը և հենց այդտեղ էլ կուլ գնացին դաժան պատերազմին:

Երբ հանճարեղ Սևակի պատգամն եմ հղում իմ աշակերտների մոտ՝ «Դու այսուհետև ժողովվես պիտի Նախ՝ ինքդ քո մեջ, եվ ապա՝ քո շուրջ…», փորձում եմ նոր լույսի տակ արծարծել հայրենիքի և ժողովրդի միավորման նրա տեսակետը:

Մեր հայրենիքը մեզնից դատարկվեց:
Բայց… ոչ մի վայրկյան, ոչ մի ակնթարթ
Մենք չենք դատարկվել մեր հայրենիքից:
Մենք սպանվեցինք մեր հայրենիքում,
Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց:

Սփյուռքահայ գրող Շ. Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպն ուսումնասիրելիս լավ եմ հասկանում, թե որքան ցավոտ ու արդիական է հնչում գրողի ահազանգը սփյուռքահայերի ձուլման վտանգի մասին: Այն այսօր էլ հնչում է որպես հայությանն ուղղված զգաստացման կոչ: Այդ ստեղծագործությունը գրելիս Շահնուրին մտահոգում էր ոչ միայն հայության ներկան, այլև ավելի շատ՝ ապագան:

Այսօրվա նահանջողներն են սպանում վաղվա հայ սերունդը: Ուծացման, ձուլման ճանապարհով քայլող վաղվա սերունդն այլևս հայ չի լինելու: Սա է մեծագույն ողբերգությունը, և այդ պատճառով Շահնուրը մարտահրավեր նետեց նահանջողներին:

Բռնագաղթից հետո օտար ափերում ապաստանած տարագիր հայուհու կյանքն եմ ճաշակել և շատ լավ էի հասկանում Շահնուրի մտահոգությունը:

Խարտյաշ և բարձրասրունք գեղեցկուհիների հմայքը շատ մեծ էր, և ավանդապաշտ հայ ընտանիքների որոշ զավակներ իրենց մեջ ուժ չէին գտնում դիմադրելու այդ հմայքին:

Մի՞թե նույն մտահոգությունը չեմ ունեցել նաև ես, երբ օտար ափերում՝ հայրենիքից հեռու, ռուսական դպրոցի 2-րդ դասարան հաճախող դստերս (միայնակ եմ մեծացրել) փորձում էի հայերենը հնչեցնելով՝ հեռու պահել սպասվող վտանգից:

Որքա՜ն լավ եմ հասկանում օտարության մեջ հայրենիքի կարոտով տառապած Իսահակյան գրողին, որ երբ նրա պանդխտության երգերից եմ խոսում, օտար երկնքի տակ բախտ որոնող փախստականի իմ կյանքն եմ հիշում: Եվ իմ հիշողության մեջ կրկին ուրվագծվում է բռնագաղթի ճանապարհը, ու հայրենիքից հեռու «օտար, ամայի ճամփեքի վրա» ապաստան գտած ընտանեկան «խմբանկարից» պակասող իմ հարազատների (հայր, մայր, տատ) կորուստն եմ հիշում: Եվ Շիրազ հայրենասեր բանաստեղծի մասին դասավանդող ուսուցիչս սկսում է մի նոր հայացքով ընկալել նրան:

Ամենայն անգամ,
Երբ հայրենիքի մասին են խոսում,
Իմ միտն է գալիս առուն մեր դռան,
Որ մանկության հեքիաթն էր ասում
Եվ մեր խրճիթը բարդու տակ մենակ,
Ուր անուշ ծխով օջախն էր վառվում,
Եվ օրորոցս՝ այն սուրբ ծխի տակ,
Որ այնպես քաղցր մայրս էր օրորում:

Չափազանց ցավոտ և սրտառուչ է ինձ համար պանդխտության թեման: Միջնադարի և նոր շրջանի շատ բանաստեղծներ են երգել օտար ափերում բախտ որոնող պանդուխտների զգացումները: Ժողովուրդն ունի բազմաթիվ երգեր՝ հյուսված սիրո և կարոտի զգացումներից («Կռունկը»): Այդ երգերը միշտ էլ հնչել են խոր հայրենասիրությամբ, նրանց հերոսը՝ պանդուխտ հայը, օտարության մեջ հոգեպես մնում է հայրենի հողի հետ, երազում իր երկիրը, հույս փայփայում, որ մի օր «եղեգան փողը» կհնչեցնի հաղթական փառքն իր հայրենիքի:

Արցախյան ազատամարտ տարած մի բուռ ժողովրդի համար որքա՜ն արդիական են հնչում այսօր Վարուժանի տողերը, որ «արյունից պիտի ծնվեն կակաչներ», հայրենիքի նահատակները «պիտի կանգնին գերեզմանին մեջ իրենց», կլինի վարդահեղեղ գալուստ, հայ մայրերը կծնեն «հսկա և հերոս» քաջարի զավակներ, կապրի հայ աշխատավորը, կծփա հայոց արտը, և հայ երդիկներից հավերժորեն կբարձրանա ծուխը:

Իսկ համամարդկային հնչողություն ստացած և միաժամանակ մարդասիրական խոր բովանդակություն ունեցող «Նարեկը» ուսուցանող դպրոցի ուսուցիչը պիտի խոսի համայն մարդկության մաքրվելու և կատարելագործվելու մասին: Չէ՞ որ միջնադարի մեծ մարդասերը ձգտում էր մարդուն տեսնել աստվածացած, այսինքն՝ կատարյալ, անարատ, անթերի ու ազատ:

Եվ Աբովյան հայրենասերի ու մանկավարժի՝ հեղինակի կերպարի կողքին պիտի կանգնի հայ ուսուցիչը՝ իր անկեղծ, գրավիչ, համոզիչ ու մատչելի խոսքով, իր ապրած կյանքով, իր նոր կերպարով՝ որպես առաքյալ, մաքրության աղբյուր, լույսի ջահակիր, ու հնչեցնի խոսքը մեծ լուսավորչի. «Չե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահա՛ս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցե՛ք»:

Նապաշա ՊՈՂՈՍՅԱՆ
Մարտակերտի Վլ. ԲԱԼԱՅԱՆԻ անվան միջն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության

ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ է ուսուցչի դերը մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում: Ուստի ժամանակակից ուսուցիչը պետք է օժտված լինի մանկավարժական նուրբ տակտով, ունենա հարուստ ներաշխարհ ու գիտելիքների մեծ պաշար: Պատահական չէ, որ ուսուցչի աշխատանքը համեմատում են ոսկերչի գործի հետ, որը պահանջում է նուրբ դիտողականություն ու հմտություն և համբերություն:

Ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների խնդիրը միշտ էլ հուզել է մանկավարժներին, սոցիոլոգներին ու հոգեբաններին: Բայց այն աստիճանաբար փոփոխվել և այժմ ստացել է գիտական բնույթ: Ժամանակակից մանկավարժության մեջ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների հիմնախնդիրը դիտվում է նրանց գործունեության սոցիալական ընդհանուր համապատկերին՝ կոլեկտիվ հարաբերությունների հետ անխզելի կապի մեջ:

Ուսուցիչն աշակերտների վերաբերմամբ հանդես է գալիս իբրև մի անձնավորություն, որը հասարակության ու մանկավարժական կոլեկտիվի կողմից լիազորված է կատարելու ուսումնական ու դաստիարակչական որոշակի գործառույթներ: Իսկ մանկական կոլեկտիվն էլ ինքնավարության զանազան մարմիններում ունեցած իր ներկայացուցիչների միջոցով լուծում է իրեն վերաբերող ու հետաքրքրող զանազան հարցեր: Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կատարելագործվում են աշակերտական ինքնավարության համակարգի, մանկավարժական կոլեկտիվի, մանկական ու պատանեկան կազմակերպությունների գործառույթների կատարելագործման միջոցով:

Ուսուցչի և աշակերտների ճիշտ փոխհարաբերությունների հաստատման գործում կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչ չափով է ուսուցիչը կարողանում ներթափանցել ժամանակակից դպրոցականի հոգեբանության աշխարհը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր մանկավարժներն են կարողանում ներթափանցել պատանիների ու աղջիկների ներաշխարհը, ընկալել տարիքային առանձնահատկությունները: Նման մանկավարժների համար պատանիների հոգեկան աշխարհը թվում է անմատչելի ու անհասկանալի:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լավ գիտակցի, որ իր առջև նստած է արժանապատվության մեծ զգացում ունեցող պատանին, որի բարոյական կերպարը ձևավորման ընթացքում է: Դեռահասը զգայուն է իր հասցեին արվող յուրաքանչյուր արտահայտության ու խոսքի հանդեպ, որը կարող է նրա վրա ունենալ կործանարար ազդեցություն կամ ընդհակառակը՝ կարող է թևավորել նրան: Այո, ուսուցիչն իր վերաբերմունքով պետք է աշակերտին սիրել տա ավանդվող առարկան:

Ի՞նչը կարող է ուրախացնել կամ վշտացնել աշակերտին: Շատ բան, բայց ամենից ավելի՝ ուսուցչի վերաբերմունքը նրա նկատմամբ: Ուսուցչի մասին աշակերտի պատկերացումը սկսվում է ուսումնառության առաջին իսկ պահից, որը տարիների հետ աճում, զարգանում և դառնում է կարծիք:

Ուսուցիչը տարրական դասարանների երեխաների համար հեղինակություն է: Տարիների հետ երեխաները սկսում են ճանաչել դպրոցն ու ուսուցիչներին, համեմատել ուսուցիչների գործողությունները և որակել դրանք:

Յուրաքանչյուր դասի ժամանակ դասարանում գոյություն ունի որոշակի հուզական միկրոկլիմա, որն ազդում է դպրոցականի ընդհանուր հուզական ինքնազգացման վրա: Այս կամ այն ուսուցչի նկատմամբ նրա արած գործողություններն ու վերաբերմունքը զգալի չափով համապատասխանում են ընդհանուր տրամադրությանը: Հուզական միկրոկլիման ուսուցչի հմտության արդյունք է: Դպրոցականների յուրաքանչյուր տարիքային խմբում գոյություն ունի այդպիսի միկրոկլիմա ստեղծելու իր առանձնահատկությունը:

Բարդ են առանձնապես հարաբերությունները բարձր դասարանցիների հետ: Այդ տարիքում նրանք շատ բան են իմանում չափահաս մարդկանց անձնական կյանքի մասին և ինչ-որ բանում արդեն կարող են համեմատել նրանց ինչպես միմյանց, այնպես էլ իրենց հետ:

Դպրոցականն ուսուցչին, ասես փուլերով է ընկալում:

☞8

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՃԻ ՀԱՅՐԵՆԻՔ՝ ԵՂԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

(Արաքսից այն կողմ...)

Հաճախ եմ շրջագայել և տպավորություններս թղթին հանձնել ու արժանացրել ընթերցողի բարեհաճությանը: Բայց այս անգամ իմ ներսում փոթորկվել է կարոտը իմ նախնիների կորուսյալ հայրենիքի նկատմամբ: Երազի և իրականության միջև սահմանագիծը երբեմն մի քայլ է լինում: Մեզանից ո՞վ էր պատկերացրել, թե իրեն կհաջողվի ոտք դնել պատմական Հայաստանում, շոյել ավերված Անիի բերդապարիսպները, ոտաբոբիկ մտնել Մայր տաճար, մոմեր վառել, «Հայր մեր» մրմնջալ և աղոթել առ Աստված, որ տուն վերադառնան գերյալ մեր քաղաքներն ու գյուղերը:

Եվ դա հաջողվեց մեզ՝ Արցախի մի խումբ մանկավարժներիս:

Ինչքան մեր միկրոավտոբուսները մոտենում էին թուրքական սահմանին, այնքան հուզմունքը ալեկոծում էր մեզ: Այդ պահին մեզ հանգստացնում էր վեհանիստ Մասիսը, կարծես ասելով՝ հանգստացեք, զավակներս, դուք տուն եք գնում…

Առաջին կանգառը Կարսն էր՝ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդավայրը: Բոլորս, անկախ իրարից, «Ես իմ անուշ Հայաստանի» էինք արտասանում: Մի պահ Կարսի նեղլիկ փողոցներում իմ առջև ուրվագծվեց փոքրամարմին, գանգրահեր, հպարտ Չարենցն ընկերուհու՝ Կարինե Քոթանջյանի հետ թևանցուկ քայլելիս…

Չէինք տեսնում թուրքական պաստառներով գունազարդված խանութները, այլ ցավով մեկ դար հետ էինք նայում ու տեսնում այն տունը, այն բակն ու այգին, որտեղ խաղացել ու մեծացել է հանճարեղ բանաստեղծը:

Կանգ առանք Չարենցի «տան» դիմաց (Տեր Աստված, չեմ ուզում այն ավերակներ անվանել): Հայկական ավանդական այդ ճոխ գերդաստանից ընդամենը պատերն են մնացել, իսկ տանիքն ու դուռը վաղուց չկային: Իրար էինք նայում մոլոր ու շվար: Ցավից ու վիրավորանքից արտասվում էինք, և կարծես այդ Սուրբ տունը Չարենցի շիրիմն էր: (Երանի՜ թե, Տեր Աստված): Մթության մեջ ճնշող լռությունն ընդհատվեց մեր ուխտագնացներից մեկի՝ Նորա Թամրազյանի ըմբոստ ձայնով. «Բավական է՝ ինչքան լացել ենք, ողբացել: Բացենք Չարենցի անունը կրող կոնյակը և խմենք նրա հարության հավերժության կենացը»: Նոր ոգևորության ալիք ստացանք Նորայի առաջարկությունից և բաժակ բարձրացրինք: Ամեն մեկը Չարենցից մի բանաստեղծություն էր արտասանում:

Մեր ոգեշունչ կոչերից ու ձայներից թուրքական ամբոխ հավաքվեց մեր շուրջը՝ իհարկե, չար, դաժան հայացքներով: Թուրք երեխաները երևի մանկուց մոր կաթից սնվել էին հայերի նկատմամբ անողոք ատելությամբ, մեղուների պես բզզում էին մեր շուրջը՝ մեզ համար անհասկանալի վիրավորանքներ տեղում և գոչում.

- Յալլա՛, էրմանլար, բիզիմ թորփաղ դը (Կորե՛ք, հայեր, մեր հողից):

Հայի ըմբոստ ոգին նորից դրան պատասխանեց… Ամեն մի «յալլա»-ին հաջորդում էր մի նոր բաժակաճառ՝ համեմված բանաստեղծություններով, պատասխան գոչերով: Մոռացել էինք տեղի, ժամանակի և իրականության զգացումը… Սասունցի Դավթի թրի պես ճեղքեցինք թուրքական ամբոխը և տիրոջ իրավունքով շրջեցինք Կարսի այգում, անցանք Վարդանի կամրջով՝ ասես կրկին չարենցվելու և նրա նկատմամբ կարոտը մեղմելու զգացումով:

Հայկական թաղամասի ավերակներ Կարսում

Թողած Կարսում գետի ափին, տունս՝ շինված, անտաշ քարով,

Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով

Եվ Կարինե Քոթանջյանին անգամ չասած մնաս բարով -

Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Հայ խոսքի ուժը տիրում էր թուրքացված քաղաքում: Այնքան հայկական էր այդ փողոցը, որ ասես աներևույթ մի ձեռք մի բուռ վերցրել էր մեր քաղաքից ու տեղադրել թուրքական այդ քաղաքում: Մեկ օր մնացինք Կարսում, բայց դարակազմիկ տպավորություն ստացանք: Նաև մի մտահոգություն էր տիրում մեզ՝ կհասցնե՞նք, արդյոք, մեր հողը, մեր բանաստեղծի տունը վերադարձնել, շենացնել ու հայացնել: Ամենուր մեզ հսկում էին թուրք ոստիկանները: Թուրքի ընչաքաղցությունը շատ էր ակնառու. ինչքան էլ հանդես գան սպորտային, մշակութային ասպարեզներում միևնույն է՝ նրանք վայրենի են մնացել: Մենք ավելի համոզվեցինք և ատելությամբ լցվեցինք, երբ Սուրբ Առաքելոց եկեղեցում տեսանք, թե ինչպես են անամոթները նամազ անում…

Շրջագայության մեկնարկն սկսեցինք Կարսից, այնուհետև հաջորդեցին Բայազետը, Իգդիրը, Վանը, Ախթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին, Մուշը, Էրզրումը, Անին, Արդահանը: Ամեն քաղաքից մի մասունք վերցրինք՝ սուրբ երդման պես մեր կրծքին սեղմելով, որ տուն կվերադարձնենք մեր կորուսյալ հայրենիքը: Հուսադրող էր Բայազետի ճանապարհին Արարատ լեռան գեղեցիկ տեսարանը հակառակ կողմից: Ուրիշ էր Վասպուրական աշխարհի հմայքը. շքեղ քաղաք է Վանը, իսկ Վանա լճի մասին խոսքերն ավելորդ են… Կապուտաչյա գեղեցկուհի… Մենք պարզապես վայելեցինք մաքրամաքուր փիրուզե լիճը տեսնելու, լողափում հանգստանալու և Վանա լճում լողալու գերագույն հաճույքը: Լճի ափին համտեսեցինք Վանա տառեխը, որը լճում ապրող միակ տեսակն է:

Օրվա բուռն տպավորություններից հետո մեր հոգևոր անդորրն ստացանք Աղթամար կղզում, որտեղ գտնվում է Սուրբ Խաչ եկեղեցին (10-րդ դար), որը համարվում է միջնադարյան հայ, ինչպես նաև համաշխարհային, կրոնական ճարտարապետության գլուխգործոց: Դրսից այն պատված է Աստվածաշնչյան թեմաներին նվիրված հրաշալի որմնաքանդակներով, իսկ ներսի կողմից՝ գունեղ որմնաքանդակներով: Միակ եկեղեցին էր, որ կրում էր խաչը…

Խաչակնքվեցինք… Խոսում էինք Աստծո հետ և մեր սրտի մորմոքը կիսում: Յուրաքանչյուրիս շուրթերին հնչում էր «Հայր մեր»-ը, բայց այն ավարտին հասցրինք և աղոթեցինք առ Աստված եկեղեցու բակում. թուրք ոստիկանն ընդհատեց և ավելորդ համարեց եկեղեցու ներսում հաղորդակցվել Աստծո հետ, դեռ զգուշացրեց, որ գործում են տեսախցիկները, իսկ բարձրաձայն աղոթելը խիստ արգելվում էր (ինչպիսի՜ անարդարություն...):

Դրվագ Աղթամար եկեղեցուց

Արևմտյան Հայաստանի ամպաքող հարսը Մշո դաշտն է:

Այս անգամ նրա ամոթխածությունը պարուրված էր ծերմակափրփուր ամպերով: Կարծես չէր ուզում իր հմայքը ոչ ոքի ցույց տալ: Այն պահում էր միայն մեզ՝ հայերիս համար: Այնուհետև կարծես պարահարթակ դարձավ Արածանին կամարող Սուլուխի միջնադարյան կամուրջը, որտեղ նահատակվել է հայ ազգային-ազատագրական պայքարի հերոս Գևորգ Չաուշը: Խանդավառվեցինք Չաուշի կերպարով և կամրջի վրա պարեցինք ավանդական «Քոչարին»: Մեր ոտքի դոփյուններից սասանվում էր հողը, և ամեն մի դոփյուն վրեժի, ցասման ոգով էր լցված: Մտանք Սուրբ Արածանի գետը: Ջուրը, չնայած ամառվա տապին, սառն էր ու հաճելի: Կարծես կրկին մկրտվեցինք արևելյան Եփրատի ափին Ամենազորի օգնությամբ՝ ամեն մեկս մի նվիրական երազանքով…

Արևմտյան Հայաստանում վերջին օրն անցկացրինք Էրզրումում, շրջեցինք Մեծ Հայքի գեղատեսիլ վայրերով: Այստեղ մեր երկարատև հանգիստն առանք և թարմ ուժերով ուղևորվեցինք դեպի Բաթում, Սև ծով… Դա իրականացավ բարերար Էդուարդ Վերդյանի նախաձեռնությամբ: «Անին տեսնելուց հետո պետք է անպայման հանգստանալ, այն էլ՝ ծովափին, որպեսզի թեթևացած հոգով տուն վերադառնանք և այն տպավորությունները, որ ստանաք մեր նախնիների հայրենիքից, կարողանաք ըստ արժանվույն մատուցել երեխաներին…»:

Մեծ է մշակութային վայրերի դերն ու նշանակությունը: Ծրագիրն իր հերթին բավականին հագեցած էր: Բաթում քաղաքին հաջորդեց Թբիլիսին: Սայաթ-Նովայի գերեզմանը տեսնելու համար այցելեցինք Սուրբ Գևորգ եկեղեցի: Դրա տրամաբանական շարունակությունը եղավ Սուրբ Էջմիածին եկեղեցին: Ամեն մի եկեղեցի նոր հուշեր, նոր զգացողություններ էր արթնացնում ուխտագնացներիս մեջ: Նոր ապրումներ… Տարօրինակ զգացումներ… Հաճելի պահեր…, որոնք անջնջելի կմնան մեր հիշողության մեջ: Այս ուխտագնացությունը՝ «Արցախ-Սյունիք-Վրաստան-Արևմտյան Հայաստան», անկրկնելի բաց դաս էր բաց երկնքի տակ, որը ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն ունի, և այն կետ առ կետ պետք է ըստ արժանվույն մատուցենք աշակերտներին:

Տպավորությունները, որ ես ստացել եմ, անկրկնելի են ու անբաժան: Դրանք լուսանկարների, ձայնասկավառակների տեսքով զետեղել եմ իմ հուշալբոմում և նոր եռանդով ու լիցքով, նոր ուսումնականում պատրաստ եմ երեխաների հետ կիսելու, ցուցադրելու և հայրենասիրության նոր կրակ վառելու:

Ուզում եմ երախտագիտության խոսք հղել ուխտագնացության հովանավորներին, ովքեր աջակցել են իրականություն դարձնել մեր վաղեմի երազանքը:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Սպեփ. Ա. Դուլյանի անվան
հ. 2 հիմն. դպրոցի
հայոց լեզվի եւ գրականության
ուսուցչուհի

Մեր բարեկամները

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՖՐԱՆՍԻԱ՛

Աշխարհն այնպես արագ է փոխվում, որ չես էլ հասցնում հետևել նրա հարափոփոխ ընթացքին, չես հասցնում ընկալել նորը, հարմարվել նրան կամ զարմանալ: Չնայած փոփոխված մեր օրերում շատ քիչ բաներից կարելի է զարմանալ: Մեր մանկության տարիներին կզարմանայինք, եթե ֆրանսիացի տեսնեինք, այն էլ՝ հեռավոր գյուղում:

Այժմ ֆրանսիացին մշտական սպասված հյուր է դարձել Սոս գյուղում: Երրորդ տարին է, ինչ Ֆրանսիայից մեզ այցելության են գալիս մի խումբ ուսանողներ ու երիտասարդներ: Գալիս են ծանոթանալու, շփվելու ղարաբաղցու հետ, փորձելու օգտակար լինել մեզ՝ ինչով կարող են: Նրանք Ֆրանսիայում գործող DAC (սփյուռքահայերի և հայերի կապ) կազմակերպության անդամներ են: Ամեն տարի այցելում են Հայաստան և Ղարաբաղ ու իրենց աջակցությունը ցուցաբերում հայրենիքին: Զարմանալին այն է, որ նրանց հետ այստեղ են գալիս նաև այլազգիներ:

Այս տարի տասնչորս հոգանոց խմբի մեջ հինգ ֆրանսիացի կար: Նրանք Ղարաբաղ էին եկել իրենց հայ ընկերների հետ, ցանկացել տեսնել հայի երկիրը: Տարեցտարի ամրապնդվում է հայերի ու սփյուռքահայերի կապը, խորանում: Նրանց մեջ կային երիտասարդներ, որոնք արդեն երկրորդ անգամն էին այցելում Սոս գյուղ:

Խումբը ճամբար կազմակերպեց դպրոցում, երեխաներին սովորեցրին պարեր, հայկական ու ֆրանսիական երգեր, երեխաները սովորեցին Շառլ Ազնավուրի «Լա Բոեմը» երգը:

Ֆրանսիացի մեր հյուրերը սոսեցի երիտասարդների համար վերանորոգեցին թենիսի սենյակը, իսկ անցյալ տարի վերանորոգել էին հանդիսությունների սրահը:

Սոսեցիները սիրով և հարգանքով են ընդունում նրանց, իսկ երեխաները անհամբերությամբ են սպասում նրանց ու ափսոսանքով բաժանվում իրենց ֆրանսիացի բարեկամներից: Չնայած խմբի մեծ մասը հայեր են, սակայն այստեղ բոլորին «ֆրանսիացի» են կոչում:

☞7

ՉԱՐԵՆՑ - 115

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐԻ ԽԻԶԱԽ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

...Ով անհայտ հորիզոնների զննիչ,-
Ընթացի՛ր, գնա՛ք ուղիղ, և լինի թող այն քարքարոտ,
Անվհատ թող լինի ոգիդ, և կարոտդ թող լինի աննինջ:

Քսաներորդ դարասկզբի փոթորկուն իրադարձությունների ժամանակաշրջանում, երբ արահետների կեռմանները կորչում էին բավիղներում, իսկ ցողաթաթախ շավիղները որոնում էին ուղիներ, հրավարս մի օր զլեց Պոեզոզուռնան՝ ի լուր հայտնելու, որ ծնվել է մի մեծ պոետ՝ մկրտված եղիշե Չարենց...

Ծնվեց ժամանակի աստղը, քանզի օրերի հրաշունչ ոգին պահանջում էր բոցավառում: Եվ տիեզերածիր անհունում նա ցոլաց՝ չընկրկելով անկումների սարսափից:

Ծնվեց մեծությունների աստղաբույլում՝ հաստատելով արագոնյան բնորոշումը՝ թե մեր դարի ճակատը կրում է պոետներից մի քանիսի պայծառ անունների՝ Քիփլինգի, Ապոլիների, Էլյուարի, Ռիլկեի, Գարսիա Լորկայի, Մայակովսկու, Եսենինի, Չարենցի, Իսահակյանի դրոշմը, որոնք իրենցից հետո խարույկ են թողել:

Այդպես են լուսավորվում պատմության քառուղիները, զի երկնակամարը լցվում է կենսական լիցքերով, որոնցից բռնկվում են հրեղեն ճշմարտության խոսքեր.

Թե ուզում ես երգդ լսեն,
Ժամանակիդ շունչը դարձիր,
Կապվիր նյարդով յուրքանչյուր
Քո օրերին ու քո դարին,
Կյանքը սիրիր լիահնչյուն
Ու մի դավիր քո քնարին:

Եվ Չարենցն ինքը դառնալով ժամանակի շունչը, դարձավ միաժամանակ հորիզոնների զննիչն ու գաղտնագրերի վերծանողը՝ որպես պատգամախոսը մարգարեական հայտնության, թե հայ ժողովրդի միակ փրկությունն իր հավաքական ուժի մեջ է:

Մեծ բանաստեղծը, ժողովրդի ճշմարտության ճանապարհը տեսնելով հայրենիքին նվիրաբերվելու և կամավորագրվելու վճռականության մեջ, որով քայլել են բոլոր ժամանակների հայկազուն կտրիճները՝ որպես ոսկե երակ հնամյա ցեղի, տակավին երիտասարդ, գնաց մաքառման ճանապարհով՝ հուսալով, որ եղեռնի ուրվականը չի անցնի մեր հայրենիքի ճամփաներով, ու մեր ծաղկուն ոստանները չեն ավերվի ու դատապարտվի Մեռյալ քաղաքների կարգավիճակի...

Սակայն դանթեական դժոխքը խելացնոր շուրջպար բռնեց հենց մեր երկրում.

Եվ մենք այդ գիշեր մնացինք այդտեղ՝
Մեռած քաղաքի ավեր շենքերում:
Ամբոխվել էին տեսիլներն ահեղ
Խեղերի նման ցատկում ու պարում,
Ու դառնում էին մեռելներ մի տեղ՝
Սատանայական տենդոտ շուրջպարում:

Ահազարհուր տեսիլները Չարենցին ժամանակից շուտ հասունացրին և օծեցին որպես հրաշունչ օրերի բանաստեղծ, աշխարհասասան օրերի մրրկահավ: Ի՞նչ էր մնում անել անողոք իրականության, ասել է թե՝ տիեզերքի մառ-զառանցանքի դեմ, եթե ոչ ապրելու հսկա տենչը բեռ արած քայլել՝ վառելու երկնքի աստղերը մարած, որ արդարությունը չկորչի օրերի մշուշում և արյունալիճ օրերից հետո գեթ բացվեն արշալույսներ վսեմ, որ մաքառողների ոգին մնա կորովի, և հայացքները նրանց՝ կապո՜ւյտ ու խաղաղ: Որ իր երազած ու երգած կապուտաչյա հայրենիքը չցնդի հանկարծ, այլ՝ հավերժանա...

Եվ հավատալով կռվի ելած մարտիկների կամքին՝ բանաստեղծը, առանց հուսալքության, անգամ արհավիրքների մեջ տեսավ քաջազունների՝ արևավառ հեռուներում բացած հորիզոնները, ուր շողում է անվերջ լույս օրերի արևը, այսինքն՝ խոշտանգումներից փրկված երկիրը: Նրանք կային, կային այն ողջակիզվող հոգիները և եղան մեր օրերում, որ ուժ ունեցան նոր տենպ և ուղի տալու արևներին և անգամ վար բերելու երկինքներից արեգակներ.

Եթե ուզեն՝ արևներին նոր տե՛մպ կտան ու նոր ուղի...
Եթե ուզեն՝ արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն՝ վար կըբերեն երկինքներից արեգակներ...
Եթե ուզեն կամքով արի ու աշխարհի հրով վառված...
Ինչե՞ր միայն չեն կատարի...

Հենց այս զավակները մարտադաշտում մարտնչեցին՝ արդարության ճակատին դաջված խարանը մաքրելու և մեր հայացքը պարզելու դեպի օրերը գալիք, դեպի հրկեզ ապագան, որ եկավ մեզ զինելու ու փրկելու մեր պատմության այն էջը, որ կարող էր վերջինը լինել:

Այսպիսի ազատակամության շնորհիվ փրկվեց մեր նորօրյա վավերական պատմությունն ու այն եզերքը, որ կոչվում է Արցախ և նոր օրերի արշալույս:

Օրերը դարձան հրկեզ, իսկ աստեղային պահին մեծ բանաստեղծն անվարան գնաց իր երազանքների ետևից.

Ուզո՞ւմ ես՝ որպես գնդասեղ
Արևը խրեմ փողկապիս:
Առնեմ, որպես սինի,
Երկինքը աստղերի խաղով -
Ու տանեմ այն հարսանիք...

Այսպես բանաստեղծն իր երգերով մտավ մեր հոգիները ու հասցրեց մեր սրտերը շոյել և մարգարեանալով ասել, որ դարերը երկնել են իրեն, և դարձյալ ապագա դարերում իր անունը լինելու է բարձր ու մեծ.

Ես եմ հիմա-մի պոետ, և իմ անունը-Չարենց,
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ:
Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական
Դեպի դարերը նորից՝ դեպի վառվող ապագան:

Չարենցը եկավ հրո երկիրը մեզ ընծայելու, եկավ տխրադալուկ երգերի մեջ ծիածաններ վառելու, եկավ հզոր գազելներ ու տրիոլետներ շռայլելու և էմալե պրոֆիլների ու պչրուհիների կողքին՝ արևին ութնյակներ հղելու, որ բացվեն տաղեր ու խորհուրդներ զարմանալի և ասեն Հայաստան երկրին.

Քո Չարենցին լեզու տվող երկի՛ր Հայաստան,
Հազար ու մի երգ ես տեսել - էլի կտեսնես:

Եվ հին ու նոր օրերի Հայաստանը ձմռան ցրտերում զգաց մեծ պոետի սրտի հուրը, Սայաթ-Նովի սազին կարոտ նազանք յարի՝ զառ գոզալի հին մրմուռը, լցվեց զուռնի անուշ կանչով ու միշտ մնաց այդպես արբած ֆայտոն նստած, քուչով անցնող Չարենց յարի երգի կանչին ու տեսնելով, որ գարունը էլի կգա բլբուլ երգով, հալվող խունկով ու շուշանով, դարձյալ զգաց բանաստեղծի էշխն ու հևքը՝ հասկանալով, որ նահրյան աղջիկներից շատ առավել իր Հայաստան յարն է նրան կրակ գցում, լուսապսակ ճակատների փառքի ճամփան միշտ մնում է սեգ Մասիսը, որ հավերժող գոյության մեջ հազար ու մի վերքով խոցված ժողովրդի բաղձած դուռն է, հույսի ճամփան...

Այլապես մեր փրկության արևը կճարճատեր արևոտ միգում, և անօգուտ տվայտանք կլիներ ամեն ճիգ, որ գործադրվել է բոլոր հրաշունչ օրերին և փոխանակ անցյալի միֆական հուշերով տարվելու՝ նորօրյա Հայաստանը կերտելուն նվիրաբերվել, որ հայ բազկի, կորովի զինվորների պայքարով իրագործվեց:

Այսպես մեր ազգային երազն իրականացավ և հարդագողի ճամփորդները դարձան ապագայի սերմնացաններ, իսկ իրագործված երազանքները պարգևեցին մեզ ազատ ու անկախ հայրենիք:

Այդ երազանքները փարվեցին մեր սուրբ տեղերին, երբ տեսանք հալածական ժամանակներից հետո Չարենցի անունը թնդալիս, երբ նոր սերունդը Չարենցի գրքերում գտավ իր նվիրագործված իղձերը, և հայոց ամեն մի շուրթ բարբառում է՝ Չարենց:

Անցավ մեկ դար: Երախտապարտ ժողովուրդը մեծ ցնծությամբ նշեց պոետի 100-ամյա հոբելյանը, պոետական հրավառությամբ: Ամենուր ասմունքը շիթվում էր ժողովրդի շուրթերից և հավաստում չարենցյան պատգամների ճշմարտացիությունը, թե ինչպես միասնական պայքարով փրկվեց հայրենիքը:

Անցավ ևս մեկ տասնամյակ, և կատարվեց անսպասելին: Հայաստանի գրողների միության հետ Շուշի ժամանեց բանաստեղծի դուստրը՝ Անահիտ Չարենցը: Երեկոյան Ստեփանակերտում կայացավ գրական երեկո՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 110-ամյակին:

Այնուհետև ամբիոնին մոտեցավ բանաստեղծի դուստրը՝ ասելով, որ ինքն ընդամենը երկու տարեկան էր, երբ հորը բանտարկեցին, և ոչինչ չի կարող պատմել իր հոր մասին (ազգային գաղափարների համար ցարերի գահին նստած, թիֆլիսցի նեղճակատ կինտոն միջնադարյան կացնով էր հաշվերհարդար տեսնում): Սակայն, շարունակեց դուստրը, իր առջև Չարենցը պատկերանում է մնայուն օրերի շնչով և կանանց մասին հյուսած շքեղ հեքիաթներով:

Չարենցագետ դուստրը բացեց բանաստեղծի աշխարհը, ուր բանաստեղծի ծննդավայրի հարազատ պատկերին միահյուսվում էին անձնական ապրումների թրթիռները և մեծ ներումը աշխարհին ու մարդուն, և բանաստեղծը սլանում էր իր աստեղային երազների ճանապարհով:

- Դեպի երկինք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի -
Իմ բա՛րձր, հին ու աստեղային երազների ճանապարհով...

Այսօր էլ իմ ունկերում է Անահիտ Չարենցի մեղմանուշ ձայնը, որ պատշաճին ներկայացրեց մեծ պոետի ողջ գործունեությունը և ընդմիշտ մնաց չարենցասերների հուշերում:

Սա Չարենցին նվիրված բանախոսություններից առանձնահատուկն էր: Հետո հինգ տարի անց ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում լսեցինք մեծ չարենցագետ Դավիթ Գասպարյանի բանախոսությունը, որն ամբողջացրեց Չարենցի կերպարը գրականասերներիս հոգում:

Չարենցի նկարագրած ապագայի պատկերն ավելի ցայտուն է երևում, երբ փայլում է լուսե ապագայի ցոլքը և նրա ծննդյան 115-ամյակի օրը՝ մարտի 13-ին, 115 գանգրահեր տղաներ ծաղիկներ են դնում նրա հուշարձանին, և լսվում է բանաստեղծի շշունչը նրանցից յուրաքանչյուրին.

- Լսո՞ւմ ես, այստեղ իմ սիրտն է թաղված,
Կոխոտի՛ր նրան քայլերով քո լույս,
Օ՜, դու գալիքի գանգրահեր տղա,
Մեր լավ գալիքի ոսկեհեր մանուկ:

Ո՞ր շիրիմից է հնչում բանաստեղծի ձայնը, ո՞ր հողի տակից. մի՞թե ոչ ոք չգիտի, թե որտեղ է տրոփում բանաստեղծի սիրտը, որ թոթափելով մահվան տեսիլները Հայաստանում, պահանջեց, որ կախաղաններին ոչ ոք մոտ չգա, և իր՝ կախվածի աչքերի մեջ տեսնեն պայծառ օրերն ապագա, որ մարգարեական է ոգով և էությամբ.

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,-
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

Իր անձնազոհությամբ հայրենիք փրկող բանաստեղծն ամենուր է՝ և՛ այստեղ, և՛ օվկիանից այն կողմ, ուր «Հայր մեր»-ին նմանվող աղոթքի պես է հնչում նրա երգը՝ վառելով բոլորին.

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցիր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Չարենցը հզոր շնչով բացեց մեր լուսավոր ապագայի ճանապարհը, որ դարձել է այսօրվա ներկան, և որպես գալիքի որմնադիր՝ տեսավ հոյակերտ Հայաստանը, որ փթթում է որպես բոլոր հայերի հույս հանգրվան, ուր բառն այնքան է քաղցր ու արևահամ, ինչպես որ հուռթի այգիների բարը, ուր բարձր են հնչում այն բոլոր մեծերի՝ Թումանյանի, Կոմիտասի, Աբովյանի, բոլորի անունները, որոնց գովերգել է Չարենցը, և որ Արարատի ճերմակ գագաթի պես թանկ ու հարազատ նահրյան երկիրը՝ նոր ու ծաղկուն Հայաստանը, ընդմիշտ հետևելու է բանաստեղծի յոթնախորհուրդ պատգամներին, քանզի դրանք հնչում են ոչ թե Կարսից կամ Մակուից, այլ հայրենի երկրի ամեն մի անկյունից, որ հատված-հատված միանալով՝ կազմում են նոր ու բարգավաճ Հայաստանը, և անվերնագիր ոչինչ չի լինելու նահրյան երկրում:

Ահա այսպես է գրվել Չարենցի «Գիրք ճանապարհին», որ մեր ժողովրդի անցած ճանապարհների ամբողջացումն է, որի ուղին են բռնել հայոց մեծերը, ինքը բանաստեղծն ու Խաչատուր Աբովյանը, ողջ հայ ժողովուրդը, որից երևում են մեր պատմության քառուղիներով անցած խիզախ ճանապարհորդները, որոնց հավիտենական ժամանակը շշնջում է անանց բառեր, իսկ բարձունքին նրանցից յուրաքանչյուրի առջև Մասիսն է, որ կանչում է հայոց մեծերի աստղաբույլին դեպի իր Պառնաս բարձունքը, որ այնտեղ գոնե ճաշակեն հավերժական հանգիստ...

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան
հ. լեզվի եւ գրականության

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՖՐԱՆՍԻԱ՛

6 ☞ Սոսեցիներն իրենց երախտագիտությունն են հայտնում մեր սփյուռքահայ բարեկամներին, ֆրանսահայերին ու Ֆրանսիային, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաճյուղի ներկայացուցիչ Միշել Տանկրեզին, ում ջանքերով իրականացվում են այս և բազմաթիվ այլ բարեգործական ծրագրեր:

Ես զարմանքով պարզեցի, որ Միշելը ոչ թե ֆրանսահայ է, այլ զտարյուն ֆրանսիացի, ով արդեն տասնութ տարի է՝ դարձել է ղարաբաղցի:

Միշել Տանկրեզը մեկն է այն մարդկանցից, ում բարությունը սահմաններ չի ճանաչում, ով կարողանում է նվիրվել օտարին ու սիրել նրան հարազատի պես:

Այս զարմանալի ֆրանսիացին առաջին անգամ Ղարաբաղ եկավ պատերազմի տարիներին՝ որպես օգնություն բերելով հագուստ, դեղորայք և ռադիոկապի սարքավորումներ:

1994-ին այստեղ նա ծանոթացավ նույնպիսի նպատակներով Ղարաբաղ այցելած մարսելահայ Մարիամին, սիրահարվեց նրան, ամուսնացավ ու մշտական բնակություն հաստատեց Ստեփանակերտում: 1996-ին ծնվեց նրանց դուստրը՝ Հռիփսիմեն: Նա հայկական դպրոց է գնում, սովորում երաժշտական դպրոցում, քանոնահար է:

Այս տարիների ընթացքում Տանկրեզի ջանքերով Ղարաբաղում կառուցվել են բազմաթիվ մանկապարտեզներ, կահավորվել դպրոցներ ու մարզադահլիճներ:

Անցյալ տարի Ճարտարում շահագործման հանձնվեց 80 տեղանոց մանկապարտեզը, Դրախտիկում շուտով կշահագործվի 50 տեղանոց նոր մանկապարտեզ, իսկ Սոսում ընթացքի մեջ է շինարարությունը:

Միշելն ամեն տարի համազգային դրամահավաքի օրերին այցելում է Ֆրանսիա, քարոզում ու համոզում մարդկանց, նոր դրամական միջոցներ հայթայթում հայերի համար:

Հանուն հայուհի կնոջ նա լքեց բոլորիս երազանքների երկիր Ֆրանսիան, լքեց հինգ հազար անդամ ունեցող մարզակումբի նախագահի պաշտոնը ու մշտական բնակություն հաստատեց Ստեփանակերտում՝ պատերազմող ու աշխարհից չճանաչված աղքատ ու փոքրիկ մի երկրում, սովորեց հայերեն, սիրեց հայերին:

Ինչպե՞ս չզարմանաս:

Կարծում եմ, Աստծո մատը խառն է Միշելի պատմությանը: Նա ծնվել է 1943թ. սեպտեմբերի 2-ին՝ Ղարաբաղի անկախության օրը, իսկ կինը՝ Մարիամը, Հռիփսիմեին լույս աշխարհ բերեց հունվարի 6-ին:

Շնորհակալ ենք քեզ, Միշել, շնորհակալ ենք, Ֆրանսիա՛, շնորհակալ ենք ամեն ինչի համար:

Սուսաննա
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
գ. Սոս

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՍԱՐՍԱՓ ԹԱԳԱՎՈՐԸ

(Հեքիաթ՝ վաղվա համար)

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում: Էս թագավորը որ իրեն մնար, լավ թագավոր կլիներ, բայց չէին թողնում: Ինչ ուզում էր անել, չորս կողմից թափվում, խնդրում, աղաչում էին, գուշակում-պաղատում էին, թե «Պետք չէ, պետք չէ դա անել, թագավորն ապրած կենա, քո ի՞նչ պետքն է մտածելը, գլուխ տրաքացնելը, էն ա հազար խորհրդական ունես, թող իրենք մտածեն... քոնը քո թագավոր լինելն է, եղիր...»:

Ու թագավորը հավատալով՝ գնում էր իր գործին:

- Աստծո պայծառափայլությունը Ձեզ, Սարսափ թագավոր,- խոնարհվելով ասում ու սպասում էր ամեն մեկը, և իր թրի զորությամբ թագավոր դառած ադամորդին իրեն ուժեղ էր զգում, քանի որ ամբողջ երկրում գիտեին նրան: Հարևան ու հեռավոր երկրներում էլ գիտեին: Իր հոր թագավորության ժամանակներում Սարսափստանի ժողովուրդը հարևան Նամազստանին էնպիսի մի դաս էր տվել, որ հազար տարի էլ չէր մոռացվի: Էդպես էլ «բարիշել էին»՝ քաղաքական հաշտության պայմանագրի կնքումը թողնելով հանգիստ ու հարմար ժամանակների:

Սարսափ թագավորի հորը՝ Ջարգանդ թագավորին էլ էր դա ձեռնտու: Հո սաղ կյանքը կռիվ չէր մղելու, տուն ու տեղ ուներ, կին-երեխեք կային, հաց ու թաց էր պետք...

Էսպես «բարիշեցին» ու սահմանագլխից էլ ետ դարձան. մեկը դեպի Հարամստան, մյուսը՝ դեպի Սարսափստան, ու ամեն մեկն իր դիպլոմատներին հրամայեց պայմանագրի թուղթն ու թանաքը պատրաստել:

Չնայած Սարսափստանի Ջարգանդ թագավորը քաջ էր, բայց թագավորելու փորձ չուներ ու իսկի մի կարգին էլ գանձարան չուներ և ստիպված էր սպասելու, թե հարևան երկրներից ով կգար շնորհավորելու, քաջալերելու, աջակցելու:

Էդպես սպասելով էլ ժողովրդին թողեց սպասողական դրության մեջ ու վեր կացավ մեռավ:

Սարսափստանի թշնամիներն ուրախացան, բարեկամները տխրեցին: Մոտ ու հեռու ապրող թագավորները եկան ցավակցելու, երկար ու կարճ զրուցեցին և գնալով առաջ, Սարսափ թագավորին խորհուրդ տվեցին հաշտվել հարևան Նամազստանի թագավորի հետ: «Վերջիվերջո, հարևաններ եք, հարյուր տարի իրար վրա թոփ ու թվանք չեք պահի, էդ գրաված նահանգներից մի քանիսը ետ տուր, հաշտվեք ու ապրեք...»:

Ով գալիս էր՝ դա էր ասում: Ով գնում էր՝ դա էր ասում:

Տո գնացող-եկողի հերն էլ անիծած, ամեն մեկն իր շահն ու բարեկամությունն էր կարևորում Նամազստանի հետ ու խորհուրդ տալիս:

Բայց երբ թագավորության ներսում ու պալատում էլ նման խորհուրդ տվողները շատացան, Սարսափ թագավորը սկսեց վախենալ: Էնպես վախեցավ, որ շտապ գագաթնաժողով հրավիրեց և իր դեմը նստած երկրի մեծամեծերին փորձելու համար հայտնեց.

- Հայտնի լինի թող ամենքին, որ ես որոշել եմ թագավորության ղեկից հեռանալ...

- Ի՞նչ...,- մի սամում անցավ բոլորի վրայով,- տե՜ր թագավոր... և սրտաճմլիկ ձայնարկությունների ու աղաչանքների մի հեղեղ ողողեց թագավորի ոտքն ու փեշը:

- Ո՛չ... ո՛չ... ո՛չ... թագավորն ապրած կենա, դու այդ բանը մի արա, մեզ սաղ-սաղ թաղիր, մեզ կրակը տուր՝ վառիր, բայց մնա: Որ մնանք հարևան Նամազստանի թագավորի ձեռքին, մեզ նաղդը սաղ-սաղ թաղելու է...

Խեղճ Սարսափ թագավորը այս ամենը տեսնելով ու լսելով, խոսք տվեց միտքը փոխել:

«Ներսից լավ պրծանք,- ուրախացավ թագավորը,- մնաց դուրսը»:

Իսկ դրսում ներսի կատարվածը ավելի շուտ իմացան, քան քաղաքամոտ Դասուն շենում: Մեկ էլ ըհը՝ պալատի դեմը հայտնվեց Ամենիկայի թագավորի դեսպան-լրտեսը:

Սարսափ թագավորին խորհուրդ տվին հիվանդ ձևանալ, չընդունել քիթը սրա-նրա հետույքներով հոտոտող էդ զառամյալ շանը, բայց թագավորը հրաժարվեց:

- Լսեք, գյադեք,- ասաց սպառնալից,- մեկ էլ տեսել եմ մեկնումեկդ մեր Ցռան Վերգոյի նման վախեցիլին եք սրսկում, ձեր սաղի մաման լացացնելու եմ: Վարչապետ Գիքոր, որպես տույժ՝ սրանց դեկտեմբերի ռոճիկները կպահես... դե, ռադ եղեք, էդ դեսպանին էլ կանչեք ներս...

- Վսեմափայլ թագավոր,- քաղաքական ծեքծեքումը սկսեց եկվորը...

- Կարճ կապիր,- ընդհատեց Սարսափ թագավորը,- բան ունե՞ս ասելու...

- Ես... իմ... Ամ... Ամենիկայի իմ պրեզիդենտը խորհուրդ է տալիս ձեզ... (ու ձեռքի փաթեթը, խոնարհաքայլ առաջ է պարզում), որ եթե...

- Լավ, հերիք կոտրատվես,- արդեն չդիմացավ Սարսափ թագավորը,- ես կկարդամ, իսկ քո պրեզիդենտին ասա, որ մենք նրա խորհուրդների կարիքը չենք զգում...

Աշխարհում ասես երկրաշարժ եղավ: Հատկապես Ամենիկայի կողմերում: Սարսափստանին ի՞նչ...

Իսկ օրեր անց, երբ Տռուզստանի դեսպանը Պաստագայի դեսպանի հետ Ամենիկայում խոստովանեց, թե իրենց հետ էլ նույնն է կատարվել Սարսափստանում, պրեզիդենտ-թագավոր Խլինքտոնը հավաքեց Նամազստանի բոլոր սիրական-թագավորներին և հայտնեց, որ Սարսափստանում իրենք այլևս անելիք չունեն:

- Ո՞նց,- զարմացան բոլորը միասին:

- Էդպես, էլի... Սարսափ թագավորն արդեն հասկացել է, որ էս հաշտարարական միսիաներն ու միջնորդ պետությունների «ջանքերը», ժողովրդական դիվանագիտության կորպուսն ու մյուս բաները սաղ սարքովի են: Ու ինչ անում ենք, նրան թուլացնելու, վախեցնելու և պարտադրելու համար ենք կաշիներս պատռում...

- Բա ի՞նչ ենք անելու,- դարձյալ զարմացած հարցրին ամենքը:

- Ի՞նչ պիտի անենք,- խնդաց պրեզիդենտ-թագավորը,- նայեք տեսեք քարտեզի որ կողմում կա Սարսափստանի նման երկիր՝ թափվենք գլխին...

- Բա մեր հա՞ղցը, բա մե՞նք...- ծղրտաց մեկը նամազստանցու անունից:

- Էլ հարց չկա, հացն էր մնացել, էն էլ էսքան տարի է՝ ուտում եք... Բա որ երկու տասը տարի անկռիվ, անկոտորվուցք ապրում եք, քիչ է՞, թե՞ քըս-քըս անեք, էլի Սարսափստանը քշենք վրաներդ...

Ու ոչ ոք ծպուտ չհանեց:

Երկար ժամանակ էլ ձեն-ծպուտ չկար:

Էռնեստ ՀԱՄՈ-ԵՍԱՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5 Ուսուցչի մասին նախնական կարծիքը հիմնվում է նրա մասնագիտական տվյալների վրա: Նայած ուսուցչի մեջ ինչպես է դրսևորվում անհատականը աշակերտների հետ ունեցած փոխգործողության եղանակներում, ամենատարբեր իրադրությունների նկատմամբ եղած ռեակցիայի մեջ, աշակերտները կարծիք են կազմում նրա բարոյական հատկությունների մասին:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում կարևոր նշանակություն ունի աշակերտների գիտելիքների գնահատումը:

Շատ ժամանակ որոշ ուսուցիչներ աշակերտների գնահատականը դարձնում են վարքի գնահատական: Այս հանգամանքը բացասաբար է անդրադառնում ուսուցչի հեղինակության վրա:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործին մեծ վնաս է հասցնում ուսուցչի լիբերալ վերաբերմունքն աշակերտի նկատմամբ: Աշակերտի յուրաքանչյուր բացասական արարք չնկատելու տալն ի վերջո հանգեցնում է դպրոցականի վարքի կանոնների, իսկ որոշ դեպքերում նաև հասարակական համակեցության նորմերի խախտման: Քանակական կուտակումները տալիս են նոր որակ, և ի վերջո, կարգազանց աշակերտը դառնում է հանցագործ:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում կարևոր է նաև որոշակի հեռավորության պահպանումը: Հեռավորության մեծացումը հանգեցնում է օտարացման, իսկ պակասելը՝ ընտանեվարության:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վրա մեծապես ազդում է մանկավարժական կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտը, որը պետք է լինի անբասիր ու հիմնված ուսուցիչների՝ միմյանց հարգելու և միասնական պահանջի վրա: Բացառված չէ, որ կան ուսուցիչներ, ովքեր իբր իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով աշակերտների ներկայությամբ վիրավորում են իրենց գործընկերներին, նրանց մասին տարածում ստահոդ լուրեր:

Չնայած ամեն ինչ արվում է սովորողների կրթության, նրանց համակողմանի զարգացման համար, այնուամենայնիվ, քիչ բան է արվում նրանց ապագա ընտանեկան կյանքին նախապատրաստելու ուղղությամբ: Այս առումով կարևորվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդումը 9-12-րդ դասարաններում: Մենք պետք է խորապես գիտակցենք, որ այսօրվա պատանին ու աղջիկն ապագա ամուսիններ են: Վերջապես հասարակության յուրաքանչյուր անդամ ունի իր անձնական կյանքը, որը կարող է թևավորել նրան կամ, հակառակը՝ խորտակել:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վրա մեծապես ազդում է ուսուցիչ-ծնող կապը:

Հանրահայտ ճշմարտություն է, որ սովորեցնել կարող է նա, ով գիտի: Դաստիարակել կարող է նա, ով դաստիարակված է: Աշակերտին սիրել սովորեցնել կարող է նա, ով իսկապես ընդունակ է սիրելու առանց շահախնդրության, ով գիտի գնահատել բարին, վեհը, գեղեցիկը, ով իր երջանկությունը չի կառուցում ուրիշների դժբախտության վրա, ով իր մեջ ուժ է գտնում գնահատել շրջապատի մարդկանց արժանիքները:

Վ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Տումու միջն. դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

ПАМЯТИ МОЕЙ СЕСТРЫ

Вот и вновь наступил сентябрь, наступил новый учебный год. Спешат в школу ученики, торопятся и учителя. У каждого из них своя обязанность. Ученики займут свои обычные места за партами. Учителя, взяв классные журналы, войдут в классы.

В этот день у учителей принято поздравлять друг друга с началом нового учебного года. Вот и я каждый год поздравляла свою сестру, Светлану Аршавировну, желая ей долгих лет жизни. Но сегодня на другом конце провода нет ответа. Не будет ответа и завтра. Не будет уже никогда.

У каждого из нас своя линия судьбы. Ей суждено было прожить всего лишь пятьдесят лет. Но память о ней сохранится на долгие годы.

Трудолюбивая и старательная Светлана сама пробивала себе дорогу жизни. Её храбрости и отважности можно было лишь только позавидовать. Не боясь погромов и резни в г. Баку, она сдавала государственные экзамены. Рискуя жизнью, она окончила педагогический институт им. Ахундова в 1989 году. Она имела два диплома образования. Преподавала и в начальных, и в старших классах. Младшеклассники помнят её ласковой, нежной, заботливой, старшеклассники-тактичной и понятливой. Она жила школьной жизнью: радовалась успехами учеников, переживала за их неудачи. Её не забывали ученики, давно окончившие школу. Они звонили ей, шли свои письма, поздравительные открытки, навещали. С ней делились, доверяли свои секреты. Каждому из них она старалась помочь своим добрым советом.

Стаж её бесценной работы перешёл тридцатилетнюю черту. На её столе лежат многочисленные грамоты и похвальные листы. Она любила свою работу. В семье ею гордились и восхищались, в коллективе уважали и ценили. Она не щадила себя даже тогда, когда её настигла болезнь. Оптимистичная и уверенная в себе Светлана верила в счастливое будущее. Бесконечные таблетки, инъекции, бесонные ночи... А утром, собравшись силами, она вновь шла на урок. Последний свой день рождения, свой юбилей Светлана Аршавировна отметила в родном учительском коллективе. Учителя школы N 4 сильно переживали за свою коллегу, заботились о ней, старались помочь во всём, Видно знали её горькую участь.

Но болезнь всё-таки победила. 20-ого июня оборвалась жизнь Светланы Аршавировны. Она было для меня всем: образцовым учителем, уважаемой коллегой, лучшей подругой, любимой сестрой. Она поддерживала меня в радости и в горе, придавала мне уверенность своими добрыми советами.

После её смерти, среди бумаг и тетрадей, лежавших на столе, я нашла трогательное стихотворение Ц.Багдасаряна.

В чём смысл жизни?
Понять не легко.
Если след оставить
Тебе не суждено,
Если жизнь прожита
Только для себя,
И некому будет
Вспомнить тебя.

Весть о её смерти дошла до бывших учеников школы N 1 г. Сумгаита. Судьба их разбросала по свету. Многочисленные письма, звонки соболезнования из разных городов России, Армении. Многие из них мечтают побывать на могиле своей первой учительницы, некоторым уже удалось. Каждому из них навсегда запомнились поучающие, нравоучительные наставления Светланы Аршавировны. Есть кому вспомнить её добрые глаза, нежную улыбку, сладкий голос, милый взгляд. Значит, жизнь прожила Светлана не только для себя.

P.S. Большое спасибо всему учительскому коллективу школы N 4 во главе директора Минасян А., за поддержку, внимание и заботу своей коллеги. Пусть беда обходит ваши дома стороной. Долгих лет вам жизни и успехов в новом учебном году.

Анжелика АМБАРЦУМЯН

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3205: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 07.09.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի օգոստոսի «23»-ի
Պետականգրանցման համարը 10512126
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ն. Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
«16» օգոստոսի 2012 թվականի N 145/Ն
ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
«18» օգոստոսի 2012 թվականի N 246 -Ն
ք. Ստեփանակերտ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 512-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Կարապետյանին:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զորամասերի պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և
գիտության նախարարի
2012 թվականի
օգոստոսի 16-ի N 145/Ն
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի
օգոստոսի 18-ի N 246 - Ն
համատեղ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 161 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 512-Ն որոշման 2-րդ կետի համաձայն և նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) սովորողների նախազորակոչային պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու համար:

2. Ուսումնական հաստատությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից) սովորողների նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրության համաձայն պատանիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում ծառայության նախապատրաստելու նպատակով:

3. Ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման միջոցով:

4. Ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստության» հիմնական խնդիրներն են՝

1) ապահովել սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

2) սովորողներին պարզաբանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի խնդիրները, առանձնահատկությունները ու նշանակությունը,

3) սովորողների մեջ դաստիարակել ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության զգացումը,

4) կազմակերպել զինվորական երդման, համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրում և դաստիարակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամություն,

5) պատանիներին ծանոթացնել զորամասերի ռազմական անձնակազմի կյանքին ու կենցաղին, զենքին ու զինվորական տեխնիկային,

6) տեսական և գործնական պատրաստության միջոցով իրականացնել սովորողների շարային և հրաձգային պատրաստությունը,

7) սովորողներին զինել անհրաժեշտ ռազմական գիտելիքներով, ապահովել մարտավարության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի հիմունքների յուրացումը,

8) սովորողների մոտ ձևավորել ռազմակիրառական կարողություններ, հմտություններ, կամային բարձր հատկանիշներ, առաջին բուժօգնություն, ինքնօգնություն, փոխօգնություն ցուցաբերելու ունակություն,

9) սովորողների մոտ ձևավորել քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով գործելու, պաշտպանական կառույցներից և անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու ունակություն, արտակարգ իրավիճակներում գործելու հմտություն և անհրաժեշտ վարվելակերպ,

10) դաստիարակել հայոց բանակի պատմական ավանդույթներին ծանոթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիներ և աղջիկներ,

11) սովորողների շրջանում իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրությունների ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով:

5. Ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան դասավանդում է զինվորական ղեկավարը, իսկ առաջին բուժօգնության հիմունքների դասավանդումը իրականացվում է բժիշկների, միջին բուժանձնակազմի, պետական հումանիտար բուհերի քաղաքացիական պաշտպանության պահեստազորի միջին բուժանձնակազմի վկայական ունեցող շրջանավարտների (որոնք ունեն առաջին բուժօգնություն դասավանդելու իրավունք), ինչպես նաև առաջին բուժօգնության վերապատրաստման դասընթացներ անցած և համապատասխան որակավորում ստացած զինվորական ղեկավարների միջոցով:

6. Սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական աշխատանքն ընդհանուր դաստիարակչական աշխատանքի բաղկացուցիչ մասն է և իրականացվում է պլանավորված կարգով՝ դասղեկի, մյուս մանկավարժների և զինղեկի կողմից՝ տնօրենի ղեկավարությամբ:

II. ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումն ու հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրա-

☞ 10

ԽՈՍՔ

պետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, այլ շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ մշակում են հրամաններ, հրահանգներ, ուսումնական ծրագրեր, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթեր, միջոցառումների պլաններ, որոնք առնչվում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացմանը, կազմակերպում և ուսումնասիրում են սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի և «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակը՝ համաձայն սույն կանոնադրության 7-րդ գլխի և ենթահավելվածի:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝

1) իրականացնում է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումը,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների անցկացման անհրաժեշտ մակարդակը,

3) համակարգում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրերի, դասագրքերի, հաշվետախտակի, հրահանգների հանձնարարականների, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակման և ներդրման աշխատանքները,

4) կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ ուսումնադիտողական նյութերի մշակումն ու հրատարակումը,

5) ուսումնասիրում, ընդհանրացնում և տարածում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման աշխատանքի դրական փորձը, նյութական և բարոյական խրախուսանքի արժանացնում լավագույն ուսումնական հաստատություններին և աշխատողներին, կազմակերպում է «Լավագույն զինղեկ» մրցույթը,

6) մասնակցում է զինղեկների, առաջին բուժօգնության հիմունքներ դասավանդողների որակավորման բարձրացման աշխատանքներին, անցկացնում է նրանց ատեստավորումը,

7) մշակում է զինղեկների պատրաստման, վերապատրաստման և ատեստավորման կարգը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ,

8) ղեկավարում և վերահսկում է սովորողների ֆիզիկական պատրաստության վիճակը, մեթոդական օգնություն է ցույց տալիս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին և զինղեկներին ուժային վարժությունների անցկացման հարցերում,

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ կազմակերպում և անցկացնում է ռազմամարզական խաղեր, մրցումներ, գիտակրթական կոնֆերանսներ և այլ միջոցառումներ,

10) իրականացնում է նաև սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ համատեղ աջակցում է սովորողների ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադաների և ռազմամարզական խաղերի անցկացմանը,

2) պահեստազորի սպաներից ներկայացնում է զինղեկների թեկնածուներ,

3) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

4) իրականացնում է զինղեկների վերապատրաստման աշխատանքները ռազմական գիտելիքների մասով,

5) ուսումնական հաստատությանը կցում է զորամաս, որը մշտապես աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կազմակերպմանը,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ զորամաս, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինծառայողների կյանքին ու կենցաղին,

8) գործնական պարապմունքների անցկացման համար առանձնացնում է սպաների, ենթասպաների և սերժանտների, տրամադրում է հրաձգարաններ, զենք, փամփուշտներ և այլ անհրաժեշտ միջոցներ,

9) օգնություն է ցույց տալիս զինկոմիսարիատներին զինղեկների հետ ցուցադրական պարապմունքներ անցկացնելիս,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

1) մասնակցում է զինղեկների առաջին բուժօգնության հիմունքների ուսուցման գործընթացին,

2) ուսումնական հաստատություններում բժշկական գիտելիքների հիմունքների ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) իրականացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պլանավորումը բժշկական գիտելիքների մասով:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝

1) մասնակցում է զինղեկների վերապատրաստման աշխատանքներին՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման մասով,

2) ուսումնական հաստատություններում արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնատեխնիկական բազայի հարստացմանը,

4) իրականացնում է առարկայի պլանավորումը՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի մասով,

5) գործնական պարապմունքների անցկացման նպատակով ուսումնական հաստատություններին առաջարկում է քաղաքացիական պաշտպանության կառույցներ (ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ) և անհատական պաշտպանական միջոցներ:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը՝

1) մշակում և հրատարակում է մեթոդական ձեռնարկներ «Զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների», «Հասարակական կարգի պահպանման», «Քաղաքացիական պարտքի գիտակցման», «Ոստիկանություն-ուսումնական հաստատություն լիարժեք կապի ստեղծման» վերաբերյալ, օժանդակում է ուսումնական և նյութատեխնիկական բազայի հարստացմանը,

2) տանում է քարոզչական աշխատանքներ ոստիկանական ուսումնական հաստատություններ ընդունվելու հետ կապված թեկնածուներ ընտրելու համար,

3) պարբերաբար ուսումնական հաստատություններում անցկացնում է մեթոդական աշխատանքներ, հրահանգավորումներ, գործնական պարապմունքներ մանկավարժական կոլեկտիվի և սովորողների հետ՝ հասարակական կարգի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման, արտակարգ իրավիճակներից խուսափելու համար համապատասխան թեմաներով,

4) ուսումնական տարին մեկ անգամ ուսումնական հաստատություններում ուսումնասիրում է զենքի պահման պայմանները և հատկացված զենքի ու ռազմամթերքի առկայությունը:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետո1ության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը՝

1) աջակցում է ուսումնական հաստատությունների՝ զորամասերի, սահմանապահ ուղեկալների հետ կապերի ամրապնդմանը, սովորողների և զինվորական ղեկավարների հետ ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) անցկացմանը,

2) զորամասերի հրամանատարների, կրթության ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ սովորողների համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ, այլ միջոցառումներ,

3) կրթական ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ ուսումնական հաստատություններում ստեղծում է «Սահմանապահի պատանի ընկերներ» ռազմահայրենասիրական բնույթի ակումբներ և աջակցում ակումբների աշխատանքներին,

4) կազմակերպում է համատեղ խորհրդակցություններ շահագրգիռ նախարարությունների հետ պետական սահմանի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման և այլ թեմաներով,

5) ուսումնական հաստատությունները կցում է ուղեկալի կամ զորամասի, որը մշտական օգնություն է ցույց տալիս «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ ուղեկալ, սահմանապահ զորքերի ուսումնական կենտրոն, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինվորական ծառայողների կյանքին ու կենցաղին,

8) պարապմունքների համար տրամադրում է հրաձգարաններ, ինքնաձիգ հրազեն, փամփուշտներ, այլ անհրաժեշտ միջոցներ,

9) սովորողների հետ գործնական պարապմունքներ անցկացնելու նպատակով առաջարկում է թեկնածություններ սպաների, ենթասպաների, սերժանտների կազմից,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

III. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները և Ստեփանակերտի քաղաքապետը, իրենց ենթակայության տակ հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ունեցող նախարարությունների և գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ոչ պետական նմանատիպ ուսումնական հաստատությունների հիմնադիրները՝

1) վերահսկողություն են սահմանում համաձայն ուսուցիչների և մանկավարժների ընտրության մրցութային սահմանված կարգի՝ հիմնական, ավագ, միջնակարգ ուսումնական հաստատություններում պարտադիր հիմունքներով զինվորական ղեկավարների ընտրության և նշանակման ընթացակարգի վրա,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների աշխատողների թվից նշանակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման պատասխանատու աշխատողի (մասնագետի),

3) զինկոմիսարիատների, կցված զորամասերի և ուսումնական հաստատությունների տնօրենների հետ համատեղ մշակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի միջոցառումների պլաններ, կազմակերպում այդ միջոցառումների նախապատրաստումը և անցկացումը:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների համակարգված կազմակերպման համար, զինղեկների կողմից ընտրվում է ավագ զինղեկ, որի մասին տեղեկացվում է տարածքային զինվորական կոմիսարը: Զինվորական կոմիսարը այդ մասին ի գիտություն է հայտնում տվյալ տարածքի բոլոր ուսումնական հաստատությունների տնօրեններին: Ավագ զինղեկը՝

1) պատասխանատու է ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման, ռազմահայրենասիրական դաստիարակության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության աշխատանքների կազմակերպման համար,

2) իրականացնում է մշտական կապ տարածքային զինկոմիսարիատի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների և կցված զորամասերի հետ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների բարելավման նպատակով,

3) կազմակերպում է ուսումնական հաստատություններում ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նյութատեխնիկական բազայի տարրերի պահպանումն ու նպատակային օգտագործումը,

4) ղեկավարում է տարածքի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի մեթոդմիավորման աշխատանքները, կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքները տարածքում,

5) աջակցում է տարածքային զինվորական կոմիսարիատին անհրաժեշտ աշխատանքների կատարմանը (դիսպանսերիզացիա, կցագրում զորակոչ, զորահավաք, ռազմական ուսումնական հաստատությունների թեկնածուների ընտրություն, փաստաթղթերի պատրաստում),

6) նոր նշանակված զինվորական ղեկավարներին ուղարկում է ուսումնամեթոդական հավաքների և որակավորման դասընթացների,

7) պատրաստում և զինվորական կոմիսարիատ է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր՝ զինղեկներին օրենքով սահմանված կարգով հերթական զինվորական կոչում շնորհելու համար,

8) ներկայացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) կրթության բաժիններին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

17. Ուսումնական հաստատության տնօրենը՝

1) պատասխանատվություն է կրում սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման համար,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրով նախատեսված տեսական և գործնական պարապմունքների անցկացման անհրաժեշտ պայմաններ և ուսումնանյութատեխնիկական բազա, անհրաժեշտ տարրերով,

3) զինղեկին ցույց է տալիս մեթոդամանկավարժական օգնություն իրականացնելու միջառարկայական կապերը,

4) վերահսկում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման դրվածքը, արդյունքները քննարկում է մանկավարժական խորհրդի նիստում,

5) ուսումնական հաստատության կողմից տրված հայտարարության հիման վրա, սահմանված ժամկետում պահեստազորի սպաներից ներկայացնում է բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ և համապատասխան վերապատրաստում անցած թեկնածուների տվյալները: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթ կազմակերպելու համար ստեղծում է հանձնաժողով, որի կազմում պարտադիր ընդգրկվում է տվյալ տարածքի ավագ զինղեկը: Մրցույթի անցկացման տեսական և գործնական առաջադրանքների հարցաշարը կազմում է ավագ զինղեկը: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթում հաղթած թեկնածուին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում է ուսումնական հաստատության զինվորական ղեկավար՝ նրա հետ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր:

18. Զինղեկը՝

1) անմիջականորեն ենթարկվում է ուսումնական հաստատության տնօրենին: Նա պատասխանատու է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման, ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նրանց փամփուշտների հաշվառման, պահպանման ու նպատակային օգտագործման, գործնական պարապմունքների անցկացման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման համար, համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող իրավական ակտերի,

2) անձամբ նախապատրաստում և անցկացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը, ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը,

3) տնօրինում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կաբինետը, զենքի պահպանման սենյակը, հրաձգային տիրը, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնանյութատեխնիկական բազան,

4) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող այլ իրավական ակտերի պահանջների,

5) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

6) սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղաքացիական պաշտպանության համայնքային, շրջանային, հանրապետական մրցումներին,

7) առավելագույնս օգտագործում է գործնական պարապմունքներ անցկացնող ստանձնած զորամասերի, կազմակերպությունների հնարավորություններն ու օժանդակությունը՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքի որակը բարելավելու համար,

8) զինվորական կոմիսարիատների հետ համատեղ ուսումնական հաստատություններում կազմակերպում է բացատրական, քարոզչական աշխատանքներ՝ պատանիների ռազմական մասնագիտություն ընտրելու, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստման համար, անհրաժեշտության դեպքում տնօրինության միջոցով ռազմական ուսումնական հաստատության դիմորդ-թեկնածուների համար քննական առարկաներից կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ,

9) մշտապես բարձրացնում է իր մասնագիտական զինվորական և մանկավարժական կրթամակարդակը,

10) ուսումնական հաստատության դասղեկների (կուրսղեկների) հետ միասին կազմակերպում է նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման (կցագրման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և, համագործակցելով զինվորական կոմիսարիատի հետ, ապահովում է նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր,

11) մասնակցում է զինվորական կոմիսարիատի կողմից կազմակերպվող ուսումնամեթոդական հավաքներին և մեթոդական պարապմունքներին, զորահավաքային աշխատանքներին, ուսումնական հաստատությանը կցված զորամասերի ուսումնական (ցուցադրական) զորավարժություններին:

19. Զինղեկի աշխատանքը կարգավորվում է դասացուցակով, միջոցառումների ծրագրերով, տնօրենի կողմից հաստատված անհատական պլանով:

20. Զինղեկը կարող է ներգրավվել ուսումնական հաստատության հերթապահությանը:

21. Զինղեկը վարչական և դասղեկական պարտականություններ չի կարող ստանձնել:

22. Զինղեկը՝ ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հետ մեկտեղ չի կարող դասավանդել այլ ուսումնական հաստատությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում:

23. Զինղեկի կողմից դասավանդվող շաբաթական մինչև 11 ժամը համարվում է մեկ միավոր.

1) հանրակրթական (հիմնական, ավագ, միջնակարգ, վարժարան, կրթահամալիր) ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է հանրակրթական ոլորտի համար հաստատված մանկավարժական դրույքաչափերով (մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար 0,5 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար՝ մեկ միավոր),

2) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների համար զինվորական ղեկավարը վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով, մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,3 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,5 միավոր,

3) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է միջին մասնագիտական ոլորտի համար հաստատված դրույքաչափերով (մինչև 100 սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր, 100 և ավելի սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ մեկ միավոր),

4) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարման դիմաց վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով մինչև 100 սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,3 միավոր, իսկ 100 և ավելի սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր:

24. Զինղեկը պարտավոր է աշխատանքի ընթացքում կրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հաստատված նմուշի զինվորական համազգեստ, որը հատկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցներով և հայտերով: Զինղեկն իրականացնում է ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

25. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շաբաթական ժամաքանակն ըստ դասարանների և ուսումնական խմբերի սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարեկան ուսումնական պլաններին համապատասխան: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան համարվում է ուսումնական պլանով նախատեսված պարտադիր առարկա:

26. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագիրը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ:

27. Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում մշակվում և հաստատվում է տարեկան պլան՝ ըստ շաբաթների:

28. Պարապմունքների անցկացման ժամանակ դասարանները (խմբերը) համարվում են դասակներ և բաժանվում են ջոկերի, որոնց հրամանատարները, զինղեկի ներկայացմամբ, նշանակվում են տնօրենի հրամանով:

29. Պարապմունքների ընթացքում ձեռք բերած գիտելիքների և ունակությունների ամրապնդման նպատակով, ռազմագիտության ամփոփիչ փուլում կցված զորամասի բազաներում անցկացվում են ծրագրով նախատեսված ռազմադաշտային պարապմունքներ (հավաքներ):

Պարապմունքների համար սահմանված ժամաքանակը կարող է երկարացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից համատեղ սահմանված կարգով:

30. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան գնահատվում է կիսամյակային և տարեկան գնահատականներով՝ ընթացիկ գնահատականների հիման վրա:

31. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից սովորողները ազատվում են միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի սահմանած կարգով:

32. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի լրիվ դասընթացն ավարտած պատանիների ցուցակը՝ ամփոփիչ գնահատականներով, ուղարկվում է նրանց գրանցման վայրի զինկոմիսարիատ:

33. Ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական աշխատանքները կազմակերպվում և անցկացվում են ուսումնական և աշխատանքային պլաններին համապատասխան: Այդ աշխատանքներն իրականացվում են սովորողների մեջ բարոյականային հատկանիշներ, կարգապահության ու զինվորական ծառայության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, ինչպես նաև՝ հայրենիքին և նրա պաշտպանությանը նվիրվածություն դաստիարակելու նպատակով:

34. Նախազորակոչային պատրաստության արդյունքների և հսկողության անցկացման վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնադրության ձև 4-ի:

V. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

35. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար նյութատեխնիկական բազան ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, այլ շահագրգիռ նախարարությունները և գերատեսչությունները, որոնց ենթակայության տակ գտնվում են ուսումնական հաստատությունները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ուսումնական զենքով, ռազմամթերքով, փոքր տրամաչափի հրացաններով և նրանց փամփուշտներով՝ «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ բժշկական գիտելիքների ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական պարագաներով,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնական գույքով, պաշտպանական անհատական միջոցներով, ճառագայթային և քիմիական հետազոտության սարքերով:

36. Ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների և նրանց փամփուշտների ստացումը, հաշվառումը և պահպանումը կատարվում է «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով:

37. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում ստեղծվում է ուսումնական նյութատեխնիկական բազա, որն անընդհատ կատարելագործվում և համալրվում է:

38. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի նյութատեխնիկական բազան ընդգրկում է՝

1) հատուկ կահավորված դասասենյակ, որն օգտագործվում է միայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար,

2) ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանք պահելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը,

3) մարտավարության, շարային պատրաստության և քաղպաշտպանության պարապմունքների վայրերը,

4) ֆիզիկական կուլտուրայի, ուժային վարժությունների, պաշտպանամարզական միջոցառումների հրապարակները,

5) ժամապահի, օրապահի պարտականությունների գործնական պարապմունքների անցկացման կետերը,

6) ուսումնական զենքի մաքրման և յուղման, հրաձգության գործնական հնարքների կատարման մշակման տեղերը,

7) ուսումնադիտողական ձեռնարկները, ուսուցման տեխնիկական միջոցները, անհրաժեշտ այլ գույքը:

Հրաձգության տիրը և բժշկական գիտելիքների հիմունքների դասասենյակի առկայությունը ցանկալի է:

☞12

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 ☜

VI. ՁԻՆՂԵԿՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

39. Ձինվորական ղեկավարների, «Նախնական զինվորական պատրաստությունե առարկայի ուսուցիչների վերապատրաստումը և ատեստացիան անց է կացվում «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն:

40. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների և զինվորական ղեկավարների բժշկական գիտելիքների հիմունքների և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության մասով որակավորման բարձրացումն իրականացնում է լիազոր պետական մարմինը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ:

41. Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 920-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 225-Ն որոշման.

1) սահմանվում է ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկին, ըստ մասնագիտական կրթության որակավորման աստիճանների, հավելավճար տալու պայմանները,

2) համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշմամբ սահմանված կարգի ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկին ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին տրվում է հավելավճար՝

ա. չորրորդ աստիճանի որակավորման համար՝ մանկավարժական դրույքի 50 տոկոսի չափով.

բ. երրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 30 տոկոսի չափով.

գ. երկրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 20 տոկոսի չափով.

դ. առաջին աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 10 տոկոսի չափով,

3) ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկի հասանելիք հավելավճարը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին,

4) սույն կարգով սահմանված հավելավճարները տրվում են միայն հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատող զինղեկներին:

42. Հանրակրթական ուսումնական հաստատության զինվորական ղեկավարի որակավորման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ աստիճանների տարակարգերի բնութագրիչները և որակավորման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 23-ի N 62-Ն հրամանի NN 1, 2, 3, 4 հավելվածներում:

VII. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

43. Ուսումնական հաստատության սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների ստուգման նպատակն է՝

1) ուսումնասիրել «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենսդրական ակտերի, զինապարտության հարցերին առնչվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, իրենց ենթակայության տակ ուսումնական հաստատություններ ունեցող այլ նախարարությունների և գերատեսչությունների հրամանների, հրահանգների, շրջաբերական նամակների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրության պահանջների կատարումը,

2) ուսումնասիրել սովորողների նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցման կազմակերպման վիճակը, ռազմահայրենասիրական և պաշտպանազանգվածային աշխատանքների կազմակերպման դրվածքը,

3) ստուգել սովորողների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի, ռազմակիրառական կարողությունների յուրացման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում ծառայելու պատանիների նախապատրաստվածության աստիճանը,

4) օգնություն ցույց տալ զորամասերին, զինկոմիսարիատներին, կրթության մարմիններին, ուսումնական հաստատություններին՝ պատանիների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

44. Սովորողների՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնասիրման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության և շահագրգիռ նախարարությունները՝ իրենց համապատասխան ստորաբաժանումների միջոցով:

45. Ստուգումները կարող են իրականացնել համալիր ձևով՝ ընդգրկելով «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջ գործընթացը կամ մասնակի՝ առանձին հարցերի (թեմատիկ) ներառմամբ:

46. Ուսումնական հաստատությունները սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն իրականացնում են համաձայն իրենց պլանների և արդյունքները պարտադիր կարգով քննարկում մանկավարժական խորհրդի կամ խորհրդի նիստերում:

47. Հանրապետական և շրջանային (տարածքային) ստուգումներն իրականացվում են համապատասխան հանձնաժողովների կողմից: Հանձնաժողովի կազմը սահմանվում է ստուգումն իրականացնող մարմնի (մարմինների) հրամանով:

48. Ստուգող հանձնաժողովները նախապես հրահանգավորվում են:

49. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն անընդհատ գործընթաց է և ներառում է չորս փուլ՝

1) նախապատրաստական աշխատանք,

2) ստուգումներ և ուսումնասիրություն, աշխատանքի գնահատում և ամփոփում, հանձնարարականներ,

3) ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքներով սահմանված ձևի տեղեկանքների պատրաստում,

4) ընդունված որոշումների, արձակված հրամանների կատարման վերահսկողություն:

50. Ստուգումների արդյունքների հիման վրա կազմվող փաստաթղթերի (տեղեկանք) ցանկը և ձևերը տրվում են սույն կանոնադրության 1-3 ձևերում:

51. Ուսումնական հաստատությունները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ համալիր ստուգման են ենթարկվում երեք տարին մեկ անգամ: Առանձին հարցերի վերաբերյալ (թեմատիկ) ստուգումներ են կատարվում ըստ անհրաժեշտության: «ԱՆԲԱՎԱՐԱՐ» գնահատական ստացած ուսումնական հաստատությունները վերստուգվում են մեկ տարի անց:

52. Համալիր ստուգմանը հատկացվում է 3-5 օր, իսկ թեմատիկ ստուգմանը՝ 1-3 օր: Ստուգումների հարցաշարում նախատեսվում են՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ու «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կատարման, զինղեկի մեթոդական պատրաստության ու նրա կողմից անցկացվող պարապմունքների որակի, ուսումնական, նյութատեխնիկական բազայի կատարելագործման, ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների և նախնական զինպատրաստության ղեկավարման դրվածքի հարցերը:

53. Ուսումնական հաստատությանը ընդհանուր գնահատական դրվում է սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի յուրացման որակի, զինղեկի վարած պարապմունքների վերլուծության, ուսումնանյութական բազայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վիճակի համար նշանակված գնահատականների հիման վրա: Հաշվի են առնվում նաև վիճակի համար նշանակված գնահատականների հիման վրա, հաշվի առնելով նաև սովորողների ֆիզիկական պատրաստությունը, նրանց կողմից բազմամարտի նորմաների հանձնման արդյունքները և ուժային վարժանքների կատարման կարողությունը:

54. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը որոշվում է պարապմունքների ընթացքում նրանց ստացած գնահատականների հիման վրա: Ըստ այդ գնահատականների նշանակվում է ուսումնական հաստատության ընդհանուր գնահատականը.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ» է նշանակվում, եթե ստուգված սովորողների առնվազն 90 %-ը ստացել է դրական գնահատական, այդ թվում 55 %-ը՝ «ԳԵՐԱԶԱՆՑ»:

2) «ԼԱՎ» գնահատական նշանակվում է, եթե ստուգված սովորողների առնվազն 80 %-ը ստացել է դրական գնահատականներ, ընդ որում՝ առնվազն 55 %-ի «ԼԱՎ» և «ԳԵՐԱԶԱՆՑ», «ԲԱՎԱՐԱՐ» ստանալու դեպքում:

55. Ծրագրի յուրացման որակի ստուգման համար ուսումնական հաստատությանը գնահատական է նշանակվում, եթե ստուգվել է առնվազն 2 դասարան (խումբ): Գիտելիքների, ունակությունների և կարողությունների գնահատումը կատարվում է անցած թեմաների յուրացման ստուգմամբ:

56. Ձինղեկի անցկացրած պարապմունքների որակը ստուգվում է առնվազն 2 դասի անցկացման ընթացքում և գնահատվում է «ԳԵՐԱԶԱՆՑ», «ԼԱՎ», «ԲԱՎԱՐԱՐ» և «ԱՆԲԱՎԱՐԱՐ»: Դասը գնահատելիս հաշվի է առնվում դասի բովանդակության համապատասխանությունը ծրագրի պահանջներին, գաղափարական մակարդակն ու դասի դաստիարակչական նշանակությունը, դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությունը, նյութական ապահովվածությունն ու դասի ժամանակ դրա կիրառումը, սովորողների վարքը:

57. Ուսումնական հաստատությունում դասավանդման որակը գնահատվում է անցկացրած դասերի համար զինղեկի ստացած միջին գնահատականով:

58. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը գնահատվում է.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ», եթե առկա են կանոնադրության համաձայն նախատեսված կահավորված սենյակները, վայրերը և կետերը, ինչպես նաև պահպանվում են կանոնադրության բոլոր պահանջները,

2) «ԼԱՎ», եթե առկա են «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի համար թվարկված նյութատեխնիկական բազայի բոլոր տարրերը, բացառությամբ հրաձգարանի,

3) «ԲԱՎԱՐԱՐ», եթե առկա են «ԼԱՎ» գնահատականի համար թվարկված բոլոր պայմանները, բացառությամբ ուսումնական հրապարակներից (տեղերից) որևէ մեկի,

4) «ԱՆԲԱՎԱՐԱՐ», եթե ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը չի համապատասխանում կանոնադրական պահանջներին կամ վարժական զենքն ու տեխնիկան պահպանվում են սահմանված պահանջների կոպիտ խախտումներով:

59. Ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքը գնահատվում է «ԲԱՎԱՐԱՐ» կամ «ԱՆԲԱՎԱՐԱՐ»: Այս դեպքում հաշվի է առնվում սովորողների առաջադիմությունը նախնական զինվորական պատրաստության դասընթացի, արտաուսումնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բազմազան պաշտպանական խմբակների առկայությունն ու զորամասերի հետ համագործակցությունը:

60. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ընդհանուր վիճակը գնահատվում է.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ», եթե սովորողների գիտելիքները, զինղեկի անցկացրած պարապմունքների որակը, ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը գնահատվել են «ԳԵՐԱԶԱՆՑ», պատանիների ֆիզիկական պատրաստության վիճակը՝ «ԼԱՎ», իսկ ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքը՝ «ԲԱՎԱՐԱՐ»,

2) «ԼԱՎ», եթե «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի ցուցանիշները «ԼԱՎ» գնահատականից ցածր չեն, իսկ պատանիների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության վիճակը գնահատվել է առնվազն «ԲԱՎԱՐԱՐ»,

3) «ԱՆԲԱՎԱՐԱՐ», եթե վերը թվարկված «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի որևէ ցուցանիշ գնահատվել է «ԱՆԲԱՎԱՐԱՐ»:

61. Նախնական զինվորական պատրաստության թեմատիկ ստուգում անցկացնելիս ուսումնական հաստատությունը գնահատվում է միայն ստուգված հարցերի համար: Այս դեպքում ընդհանուր գնահատական չի նշանակվում:

62. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ, ուսումնական հաստատություններում իրականացնում է ուսումնասիրություններ՝ նախազորակոչային պատրաստության մակարդակը պարզաբանելու համար: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարվում է վերլուծություն:

63. Ստուգումների արդյունքներով «ԱՆԲԱՎԱՐԱՐ» գնահատական ստացած զինղեկը պարտադիր, արտահերթ կարգով ատեստավորվում է:

64. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ստուգման տվյալներով հանրապետությունում, շրջաններում կազմվում են ստուգման արդյունքների տեղեկանքներ, որոնցից մեկական օրինակներ ուղարկվում են ստուգումներ իրականացնող պետական կառավարման կենտրոնական կամ տարածքային մարմիններ:

65. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ղեկավարումն իրականացնող բոլոր մակարդակների ղեկավար մարմինները կատարում են սովորողների նախնական զորակոչային պատրաստության աշխատանքի արդյունքների տարեկան վերլուծություն և ներկայացնում են ամփոփիչ ամենամյա հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ենթահավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի օգոստոսի 16-ի N145/Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012թվականի օգոստոսի 18-ի N 246 - Ն «Հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագորխական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասի» համատեղ հրամանով հաստատված կանոնադրության

Ձև 1

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

_____
ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը

Տնօրեն
_____
Անուն, ազգանուն, երբվանից է աշխատում այդ պաշտոնում

Զինղեկ
_____
Զինվորական կոչում, անուն, ազգանուն, ծննդյան թիվ

_____
կրթություն (ընդհանուր, զինվորական) մինչ պահեստ արձակվելը

_____
զբաղեցրած զինվորական պաշտոնը, երբվանից է զբաղեցնում

_____
զինվորական ղեկավարի պաշտոնը

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Նախնական զինվորական պատրաստությունը անցկացվում է _____ դասարաններում (խմբերում), ուսման մեջ ընդգրկված են _____սովորողներ, այդ թվում_____պատանիներ:

2. Վերջին 3 տարվա ընթացքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը ուսումնասիրվել է (ստուգվել է)

_____
ստուգող կազմակերպությունը, գտնվելու վայրը

_____
ստուգման ժամկետը, ստացած գնահատականը

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. Նախնական զինվորական պատրաստությունը ծրագիրը ստուգման օրը կատարվել է _____ %-ով, դասերին հաճախումը կազմում է _____ %:

2. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը տնօրինությունը ստուգել է

_____
ժամկետը, ծրագրի բաժինը, դասարանը, ստուգված սովորողների թիվը, ստուգման գնահատականը

3.Տնօրենը ստուգել է զինղեկի անցկացրած _____ պարապմունքը և գնահատել է _____:

4. Ռազմադաշտային պարապմունքները և ինքնաձիգ զենքով հրաձգությունը մարտական փամփուշտներով անցկացվել են (պլանավորվել են)

_____
ժամկետը

_____
գտնվելու վայրը և մեթոդը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը քննարկվել է մանկավարժական խորհրդում _____

խորհրդակցության ժամանակաշրջանը

_____
արդյունքները

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՅԼ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաձիգ_____հատ,
Փոքր տրամաչափի հրացան _____ հատ,
Ձեռքի նռնակ_____հատ,
Ինքնաձիգի ուսումնական փամփուշտներ_____հատ,
Հրամանատարական արկղիկ_____հատ,
Համազորային պաշտպանական հագուստ_____լրակազմ (կոմպլեկտ),
Ճառագայթային չափասարք_____հատ,
Քիմիական հետախուզման զորասարք_____հատ:
Պակասում են՝

_____
թվարկել

_____
նշել պատճառը

IV. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

_____
անվանումը առկայությունը

ծանոթություն
_____

Նախնական զինվորական պատրաստության դասասենյակ
_____

Զենքի պահպանման սենյակ
_____

Հրաձգարան
_____մետր

Ուսումնական համալիր (վայր)՝
Մարտավարության_____

Քաղաքացիական պաշտպանության մարզահրապարակ_____

Շարային պատրաստության հրապարակ_____

Հրաձգության կանոնների և հնարքների կատարման հրապարակ _____

Գործնական պարապմունքի վայրեր_____

Օրապահի_____

Ժամապահի_____

Զենքի մաքրման և յուղման տեղ_____

Մարմնակրթության պատրաստության, ուժային վարժանքների հրապարակ, մարզադահլիճ _____

Մարտական փառքի սրահ (սենյակ) _____

Զենքի հափշտակման դեպքեր_____

երբ է կատարվել, քանակը

_____
տեսակը, պատճառը և հետախուզման արդյունքները

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական նյութատեխնիկական բազան գնահատվում է _____:

V. ՏՎՅԱԼՆԵՐ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ուսումնական հաստատությունում գործում են
_____

պաշտպանական խմբակներ_____
ինչ խմբակներ են գործում

2. Ավարտական դասարանների (խմբերի) պատանիներից բազմամարտի նորմերը հանձնել են _____:

3. Վերջին 3 տարում ռազմական ուսումնական հաստատություններ են դիմել _____ շրջանավարտ: Նրանցից ընդունվել են _____ մարդ:

4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պարապմունքներին մասնակցող սովորողներից իրավախախտումներ են թույլ տվել
_____
_____մարդ
_____
պատճառը, իրավախախտումը

VI . ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

_____
_____

Տ Ն Օ Ր Ե Ն
____ _____201_ թ. _____
ստորագրություն

Ձև 2

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

I . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

_____
ուսումնական հաստատության լրիվ անվանումը, գտնվելու վայրը

Տնօրեն _____
ազգանուն, անուն

Զինղեկ _____
ազգանուն, անուն

_____
պաշտոնավարման ժամանակաշրջանը, երբ է անցել ուսումնական հավաքներ,

_____
որակավորման դասընթացներ

1. Պլանավորումը _____
համապատասխանում է, չի համապատասխանում

_____
ծրագրի պահանջներին

Թերությունները _____:
թվարկել

2. Ծրագրի կատարումը, ստուգման օրը _____
_____%:
Ինչ հարցեր չեն ուսումնասիրվել և ինչու, պատճառները_____
_____:

3. Պարապմունքներին հաճախումների միջինը_____%,
ստուգման օրը՝_____%:
Չհաճախելու հիմնական պատճառներ _____
_____
_____:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է _____ ԱՅԴ ԹՎՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԹԵՄԱՆԵՐԻ)

Ծրագրի բաժիններ	Դասարան (խումբ)	Ստուգվել են, սովորողների թիվը	Գնահատականներ.				
			«գերազանց»	«լավ»	«բավարար»	«անբավարար»	Ընդհանուր գնահատական
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
Ընդհանուր առուգվել է			Սովորող %	Սովորող %	Սովորող %	Սովորող %	

Սովորողները բավարար չափով չեն յուրացրել (ըստ ծրագրի նշել յուրաքանչյուր բաժնի հարցերը)

_____

III. ԲԱԶՄԱՄԱՐՏԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ստուգվել է _____ սովորող: Նրանցից նորմաները հանձնել են _____%, այդ թվում՝ պտտաձողի վրա ձգում վարժությունից _____%, վազքից_____%,

Նռնակների նետումից_____%:

Թերությունները _____:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

1. Պարապմունքների թեման:
2. Դրական, առավել բնութագրական, ուշադրության և տարածման արժանի աշխատանքը

_____

թերությունները

_____

այդ թվում՝ դասի անհամապատասխանությունը

_____

դասի վատ կահավորվածությունը, նյութատեխնիկական բազան թերի

_____

օգտագործելը, դասի դաստիարակչական աշխատանքի բացակայությունը ընթացքում և այլն

V. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

_____

1.Դրական աշխատանք_____

որն է արժանի ուշադրության և տարածման

_____

և առավել բնութագրական է

2. Պակասում է _____

թվարկել պակաս տարրերը, ամբողջական կառույցները և այլն

3.Թերությունները _____

բացակայում են, չեն համապատասխանում կանոնադրական պահանջներին

_____

թվարկել սարքավորումների թերությունները, նշել զենքերի վիճակը

_____

նշել թերությունների պատճառները

VI. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է_____

1. Աշխատանքային պլանի (համապատասխան բաժնի) առկայությունը _____

_____

կազմված է, թե՝ ոչ, թերությունները, դրական,

_____

ժամկետների պահպանումը, միջոցառումների ուղղվածությունը

2. Մարտական փառքի թանգարանների, սրահների, սենյակների առկայությունը և կահավորվածությունը _____

նշել՝ ծառայում են դրանք իրենց նպատակին, թե՝ ոչ,

_____

ինչ աշխատանքներ են կատարվում

Դիտողական, քարոզչական նյութերի առկայությունը_____

ձևավորումը _____

ինչ հարցեր են լուսաբանվում և չեն լուսաբանվում, դրանց

_____

բովանդակությունը, հրատապությունը և այլն

3. Գործնական կապերը զորամասերի հետ _____

_____

կապերի առկայությունը, համատեղ աշխատանքը

4. Կապը այն զորամասերի հետ, որոնցում ծառայում են շրջանավարտները _____

_____

նշել առկայությունը և ձևերը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ունեցող պատանիների կողմից իրավախախտումները _____

_____

եղել են, թե ոչ, պատճառները

VII. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

1. Ուսումնական հաստատությունում արձակված հրամանները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ _____

_____

նշել բովանդակությունը, ժամկետը

2. Մանկավարժական խորհրդի աշխատանքը _____

որոշումները, արձանագրությունները

_____

կատարման ժամկետները և ընթացքը

3. Առարկայական մեթոդական հանձնաժողովի աշխատանքը _____

_____նշել

_____

առկայությունը և հակիրճ բովանդակությունը

4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման վերահսկողություն _____

դասարանների, ղեկավարների կողմից պարապմունքներին մասնակցելու,

_____

ստուգումներ կատարելու աշխատանքը, վերահսկողության արդյունքները:

5. Ռազմասպորտային տոնակատարության անցկացումը_____

_____

պլանավորումը

_____

նախապատրաստական աշխատանքը, արդյունավետությունը

Ընդհանուր գնահատականը _____

_____

Առաջարկություններ «Նախնական զինվորական պատրաստություն» աշխատանքի բարելավման վերաբերյալ _____

_____

_____

_____

ՍՏՈՒԳՈՂ (ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____ _____20___ թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԴ, ՔՈՒՅՐԻԿՍ

Տարիներ առաջ էր: Նոր էինք գյուղից տեղափոխվել քաղաք: Նստել էինք սեղանի շուրջը: Համերգ էինք տալիս մեր ծնողների համար Ուսուցչի օրվա առթիվ: Այն համընկել էր մայրիկի ծննդյան օրվան: Ներկայումս մշտապես հաշվվում է հոկտեմբերի 5-ը: Մեր ուսուցչական ընտանիքի համար տարիներ շարունակ այդ օրը կրկնակի տոն էր: Ես հաղորդավար էի, իսկ քույրերս՝ Նինելն ու Մարգարիտան (8 և 9 տարեկան), արտասանում էին իրենց ստեղծագործությունները: Ծնողներս լսում էին մեզ և ոգևորում իրենց ծափերով: Առաջին թղթակցությունս «Արտուտիկ» մարզային ռադիոհաղորդմանը տվեցինք և «Պիոներ կանչին»: Եթերում երեք քույրերով հանդես եկանք և մրցանակներ ստացանք (մանկական հեքիաթներ):

Երջանիկ օրեր, երջանիկ պահեր ու անվերադարձ թախիծ... Մանկության անհոգ երազներով լեցուն հուշեր... Ո՜ւր է թե հետ գային, նորից նստեինք սեղանի շուրջը ու լսեինք մորս՝ երջանկահիշատակ Թամարա Սարգսյանի խորհուրդները... Գոնե մխիթարվում ենք նրանով, որ հայրս՝ մեծագույն մանկավարժ Մ. Շահնազարյանն է կողքներիս իր խորհուրդներով: Եվ մեր հաջողությունները միշտ նվիրում ենք նրան ու մորս:

Պատկերացնո՞ւմ ես, մեր ներկա հնարավորությունները մեր մանկավարժական կյանքի սկզբում լինեին: Ափսոսում ես, բայց ինչ արած...

Եվ հիմա դու հոբելյար ես, լրանում է 50 գարունը քո:

Կարծես երեկ էր, երբ մենք չորս քույրերով սովորում էինք մայրաքաղաքի Ե. Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրոցում: Մայրիկս իմանալով, որ իր սիրելի ուսուցչուհի Ս. Խաչապետյանը դասավանդում է այդ դպրոցում, մեզ տարավ այնտեղ: Այնուհետև յուրաքանչյուրս ընտրեցինք մեր ուղին: Ես՝ կենսաբանություն և քիմիա, իսկ դու, որ միայն ֆիզկուլտուրայի պատճառով ոսկե մեդալի հավակնորդ չդարձար, ընտրեցիր ֆիզիկա առարկան: Ինչքա՜ն էր նեղացել ընկեր Խաչապետյանը, երբ քննական հանձնաժողովում ճանաչելով քո շարադրությունը, իմացել էր, որ ֆիզիկայի բաժնի դիմորդ ես: Առայսօր դու սիրում ես գրականությունը, ստեղծագործում ես, կազմակերպում գրական երեկոներ՝ նվիրված քո սիրած առարկային՝ ֆիզիկային: Հիշո՞ւմ ես առաջին ստեղծագործական երեկոն Ստեփանակերտի հ. 21 ՊՏՈՒ-ում: Մրցում էիր մայրիկի խմբի հետ: Մենք մեր մանկավարժական մկրտությունը ստացանք դժվար տարիներին: Դու մայրիկի հետ էիր մի կոլեկտիվում, ես հայրիկի հետ՝ Իվանյանում:

Արցախյան շարժման առաջին օրերին դու՝ քույրիկս, ցասումնալից նամակ հղեցիր «Կոմսոմոլսկայա պարվդա» թերթին՝ միամտաբար հավատալով, որ այն կտպեն թերթում, ու մարդիկ կիմանան, կճանաչեն, թե ով է թուրքը: Պատասխանեցին, թե եղբայրական ԽՍՀՄ-ում անհնար է պաշտպանել մեկին, դատապարտել մյուսին, որ բոլոր ազգերը միահավասար են:

Միամիտ օրենք, պատերազմը միանգամից ամեն ինչ դրեց իր տեղը:

Աշխատանքի անցար հ. 2 միջնակարգ դպրոցում: Մեր հանդիպումների ընթացքում ի՜նչ խանդավառությամբ ու գորովանքով ես խոսում ընկերներիդ, տնօրենության մասին: Անցած ուստարում կազմակերպեցիր «Ուրախ ֆիզիկա» ցերեկույթ, որի ընթացքում քո սաները ցուցաբերեցին իրենց գիտելիքները ֆիզիկայից: Միասին ստեղծագործեցիք, նորից բանաստեղծություններ գրեցիք: Քո մեջ արթնացավ մուսան, նա չէր էլ քնել, որովհետև միշտ էլ դժվար կամ ուրախ պահերին դու ստեղծագործում ես: Դա այդպես պետք է լինի, քանզի ֆիզիկան ու լիրիկան միշտ կողք կողքի են:

Դու հիմա հոբելյար ես, բայց մեզ համար նույն երկար ծամերով, ռոմանտիկ հայացքով, ժպտերես, հանգիստ, շատ դժվարությամբ վրդովվող մեղմաբարո, պրպտուն մտքով, քույրերիդ համար քաղցրիկ քույրիկն ես, հորդ հպարտությունը, ապագա երկու զինվորներիդ անուշիկ մայրիկն ես, զարմուհիներիդ համար խորհրդատու մորաքույրը, ամուսնուդ համար սիրող և համբերատար կողակիցը:

Մտովի զրուցեցի հետդ, չցանկացա խորանալ մանկավարժական գործունեությանդ մեջ, քանզի գիտեմ, որ դու միշտ նորն ընդունող ես և չես բավարարվում ձեռք բերածով:

Տարիների երազանքդ իրականություն է դառնում: Դպրոցում մտցվում են շախմատի դասընթացներ: Ուսանողական տարիներին միշտ մասնակցում էիր մրցույթներին: Հետո դա երկրորդ պլան մղվեց: Գուցե այս ժամանակաշրջանում մրցաշարերին նորից հաջողության հասնես կամ նոր շախմատիստներ պատրաստես:

Շնորհավոր ծնունդդ, եղիր երջանիկ, առողջ, միշտ շրջապատված բարեկամներով, հարազատներով և ընկերներով: Նորանոր հաջողություններ ու վերելքներ քեզ:

Քո քույր՝ Մարիետա Շահնազարյան
Իվանյանի միջնակարգ դպրոց

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Որտեղ ուսուցում կա, այնտեղ առկա է մեթոդիկան, ինչը սովորեցնում է ուսուցման ձևեր, մեթոդներ, եղանակներ, ուղիներ ու միջոցներ: Անշուշտ, այս ամենի ծեռք բերումը տրվում է ի վերուստ: Նախախնամությունը Աիդա Դավթյանին դասել էր արդեն այն մանկավարժների շարքը, ովքեր գի-

տությունների թագուհու ճշմարիտ արվեստը ճշմարիտ ուղով առաջնորդում են դեպի մատաղ սերնդի հոգու խորքերը, ինչու չէ նաև՝ ուսուցիչների: Ուսուցման ու դաստիարակության գաղտնիքների գիտակ, ուսուցչին բուժիչ դեղատոմս հրամցնող, ժամանակակից մանկավարժական մտածողության ջատագով Աիդա Դավթյանն իրականություն է դարձրել իր սրբազան երազանքը՝ նվիրվել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Լրացել է բազմավաստակ մաթեմատիկայի ուսուցչուհի, Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ուսումնական մասի գծով տնօրենի տեղակալ Աիդա Դավթյանի ծննդյան 50-ամյակը: Ծնվել է Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: Տքնաջան մանկավարժական աշխատանքի շնորհիվ արժանացել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալի:

Նկատելի են տիկին Աիդայի եռանդուն քայլքը դասարանից դասարան, մաթեմատիկայի ճամփաբաժաններում աշակերտներին վստահելի ուղիներով առաջնորդելու ձիրքը, ուսուցիչներին (ոչ միայն մաթեմատիկայի) ժամանակի պահանջներին ու խնդիրներին ծանոթացնելու, դրանք կիրառելու գաղտնիքները:

Երեք տասնամյակ շարունակ սաների սեփականությունն է դարձնում Շիրակացու ուսմունքը, մոտ երկու տասնամյակ վերահսկում ուսումնական գործունեությունը դպրոցում, ուսուցիչներին մղում ստեղծագործական որոնումների՝ արդյունավետ դարձնելու ուսուցումը, կիրառելու մեթոդիկա, որն ապահովում է գործնականություն: Այսօր շնորհավորում ենք գիտելիքների շտեմարանի փակ դռները սաների առջև բացող, «հոգևոր ոսկի» մատուցող հոբելյարի 50-ամյակը, ցանկանում շքեղ ու հրեղեն լույսով ողողված ճանապարհ, ազնվական ձգտումների հավերժական հաղթանակներ:

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Ո՛Չ՝ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Անգլիացի իմաստասեր Ջոն Լոքը պնդում էր, որ երեխան ծնվում է որպես տաբուլառասա (անգրել, մաքուր տախտակ), և եթե նրանից հետագայում ինչպիսի մարդ կձևավորվի՝ կախված է շրջապատից:

Բազմիցս նշվել է ծխախոտի վնասակար ազդեցության մասին, այնինչ մեր ընտանիքների մեծ մասում ընտանիքի հայրը հանգիստ ծխում է հյուրասենյակում՝ օրինակ հանդիսանալով իր երեխաների համար: Հաստատված փաստ է, որ ծխողը վնասում է ոչ միայն իրեն, այլև շրջապատի մարդկանց: Այն մարդը, ով մեկ ժամ լինում է ծխած սենյակում, թունավորվում է նույնքան, որքան չորս գլանակ ծխածը: Ծխախոտի ծուխը պարունակում է շուրջ 4000 քիմիական միացություններ, որոնցից 40-ը օժտված են քաղցկեղածին հատկությամբ: Ծխախոտը բացասաբար է ազդում սրտանոթային համակարգի վրա, նպաստում սրտամկանի ինֆարկտի առաջացմանը: Ծխելը մեծացնում է նաև շաքարախտի զարգացման ռիսկը, թոքերում, ավշային հանգույցներում, և ներզատական գեղձերում կուտակված ռադիոակտիվ նյութերը նպաստում են տղամարդկանց սեռական անկարողության առաջացմանը, իսկ կանանց՝ անպտղաբերությանը:

Հասարակական այս չարիքի դեմ պայքարելու գործում, իհարկե, կարևոր դեր ունեն նաև դպրոցի ուսուցիչները, նախադպրոցական հիմնարկների դաստիարակները, սակայն ընտանիքն այն հիմնական օղակն է, որտեղ պետք է ձևավորվեն օգտակար, և մերժվեն վնասակար սովորությունները: Ծնողները պետք է միշտ հիշեն, որ վատ օրինակը շատ վարակիչ է, այն միշտ ավելի շուտ է ընդօրինակվում երեխայի կողմից:

Ներկայումս սպառնում է «ազգային չարիք» դառնալ մեր ազգին անհարիր մեկ այլ վնասակար սովորություն՝ ալկոհոլամոլությունը, և որքան էլ ցավալի է, այն տարածվում է մեր երիտասարդության շրջանում: Դրան նպաստող գործոններ են ալկոհոլային սովորություններն ընտանիքում, վատ հարաբերությունները ծնողների միջև, ծնողներից մեկի բացակայությունը, կուլտուրական ցածր մակարդակը, ազատ ժամանակի աննպատակ օգտագործումը, սքրեսային իրավիճակները և վերջապես՝ նորից վատ օրինակը:

Բացահայտված է, որ գողությունների 55%-ը, բռնությունների 69%-ը կատարվում է հարբած վիճակում: Խուլիգանական արարքների 80%-ը բաժին է ընկնում դեռահասներին: Հարբեցողության և ալկոհոլամոլության հետ է կապված մանկական հանցագործությունների 75%-ը: Այս թվերն ավելի քան խոսուն են ու վկայում են, որ ալկոհոլը սոցիալական չարիք է, որը ներսից քայքայում է մարդուն՝ հսկայական վնաս հասցնելով հասարակությանը: Ցավոք, ալկոհոլամոլությունը կարող է տանել դեպի թմրամոլություն ու թունանյութերի օգտագործում:

Այո՛, թող զարմանալի չթվա, վնասակար այս սովորույթը ևս սկսվում է ալկոհոլի ու ծխախոտի օգտագործումից: Թմրամիջոցների նկատմամբ հակումը չի զարգանում հանկարծակի, դա երկարատև շրջան է, և այստեղ նույնպես առաջին հերթին տուժում են երիտասարդները: Հետաքրքրությունը, հասակակիցների շրջանում նրանց նմանվելը, չկշռադատված արարքները հատկապես բնորոշ են պատանիներին: Այստեղ դարձյալ իրենց ծանրակշիռ դերն ունեն ծնողներն ու ուսուցիչները: Առողջությունը մարդու կյանքի գլխավոր նպատակն է, այն հնարավոր չէ գնել, այն պետք է երեխայի կյանքի առաջին իսկ օրերից պահպանել, պաշտպանել հիվանդություններից: Ավելորդ չեմ համարում մեջբերել Շոպենհաուերի խոսքերը. «Առողջությունը դեռ ամեն ինչ չէ, սակայն ամեն ինչը ոչինչ է, եթե չկա առողջություն»: Ինչպես նշում է ակադեմիկոս Յու.Պ. Լիսիցինը, առողջության առաջնահերթ պայմանը առողջ կենսակերպն է, որին բաժին է ընկնում բոլոր գործոնների շուրջ 50-59%-ը: Մարդու առողջության վրա էկոլոգիական գործոնների ազդեցությունը կազմում է 20-25%, կենսաբանականը (ժառանգականը)՝ 20%, արատներն ու թերությունները՝ 1%: Դժվար չէ տեսնել, որ մեր երեխաների առողջությունը մեր ձեռքերում է: Եկեք նպաստենք մեր երեխաների առողջության պահպանմանը, զերծ պահենք նրանց վնասակար սովորություններից: 21-րդ դարում մարդը բոլոր հիմքերն ունի ապրելու 120-160 տարի...

Կյանքի վաղ օրերից երեխայի մարզումը, գործառական հնարավորությունների ամրապնդումը, հնարավորություն կտան դաստիարակել կայուն նյարդային համակարգով, ֆիզիկապես ամուր, անբարենպաստ պայմաններին դիմակայելու պատրաստ անձնավորություն: Այս գործընթացում իրենց կարևոր դերակատարումն ունեն ընտանիքը, դպրոցը, հասարակությունը:

Սուսաննա ԱՂԱՍՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ, կենս. գիտ. թեկնածու

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԻՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ
(Մասնագիտական-տեսական)

Ուսուցման գործընթացում բազմաթիվ արդիական խնդիրներ կարելի է հնչեցնել:

Իմ համոզմունքով արդիական հնչողություն պիտի ունենա նաև ուսուցչի ապրած կյանքը: Մենք գիտենք, որ մատաղ սերնդի համար կյանքի լավագույն դպրոց է հայոց մեծերի կյանքն ու գործունեությունը՝ սկսած սրբազնագույն Մաշտոցից: Նրանց կենսափորձն ու իմաստությունը, բազում խորհրդածությունները կրթության, գրականության, արվեստի զանազան բնագավառների մասին այսօր էլ գրավիչ իմաստություններ են և արդիական հնչողություն ունեն:

Բայց որքանո՞վ է ուսուցիչն իր իրական կերպարով՝ կյանքով ու գործունեությամբ, իր ապրելակերպով մասնակիցը դառնում գրողի կյանքի կամ գրական երկի վերլուծությանը:

Միշտ էլ փորձել եմ նմանության եզրեր գտնել տվյալ ժամանակաշրջանի,--- գրական ստեղծագործության մեջ տեղի ունեցած այս կամ այն դեպքի, գրողի կամ գրական հերոսի ապրած կյանքի միջև, համոզված, որ դասապրոցեսում դրանք դառնում են մարդկային լավագույն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Ամեն անգամ, երբ աշակերտներին խորհուրդ եմ տալիս, որ գեղեցիկ գրեն, հիշում եմ ամենայն հայոց բանաստեղծի իմաստուն միտքը, որ ձեռագիրն էլ բնավորություն է ձևավորում:

Բայց այսօր այդ ո՞ր մի ծնողը կվարեր Թումանյանի նման:

Երբ նա Վանից ստացել էր տղայի՝ Արտիկի նամակը, առանց կարդալու ետ էր ուղարկել՝ նամակի վրա գրելով. «Գրիր՝ ինչ ես գրել»:

Հետպատերազմյան շրջանի իմ մանկավարժական աշխատանքային գործունեության առաջին ուստարում, վերջին նստարանին նստած, 4-րդ դասարանի աշակերտուհի փոքրիկ Արմինեի պատկերն առայսօր իմ հիշողության մեջ է գամվել. որը ծանր հիվանդությունից հետո մահացավ: Այդ օրերին որքա՜ն սուր զգացի Չարենցի ապրած զգացողությունը, երբ 1919-1920թթ. որպես ուսուցիչ աշխատում էր Կարսի գյուղական դպրոցներից մեկում: Իր աչքի առջև անընդհատ սովից մահանում էին դպրոցի երեխաները: Նրանց դալուկ դեմքերն ամբողջ կյանքում չհեռացան բանաստեղծի մտապատկերից: Շատ լավ հասկանում էի, թե ամեն օր դասամատյանում աշակերտների անունները պակասելուց Չարենցն ինչպիսի սարսա---ելի լարված վիճակ էր ապրել:

Այդ ուսումնականում ամեն անգամ, մտնելով այդ դասարան, որքա~ն ծանր ապրումներ էի ունենում, երբ դասամատյանում՝ նրա անվան դիմաց, դատարկ վանդակներ էին տեսնում"

Երբ Գ.Մահարի եմ անցնում, որը Երևանի որբանոցներից մեկում դասավանդող Չարենցի սանն էր, ցավի զգացողությունը պատում է իմ հոգին, և ամեն անգամ ավելի լավ եմ ընկալում հորս ապրումները, երբ վաղ հասակից, ծնողներին կորցնելով, նրան քրոջ հետ տարան որբանոց: Իսկ երբ գաղթի ճանապարհին, պատմում եմ, որ Մահարին քրոջն էր կորցրել, փորձում եմ ամեն անգամ նմանության եզրեր գտնել գրողի և հորս չակատագրի միջև: Նա էլ էր քույր կորցրել, որին այդպես էլ չգտավ, քանի որ նրանց տարբեր որբանոցներում էին տեղավորել /տղաների և աղջիկների/: Որբանոցային դառը կյանքի մասին մանրամասնություններ այդպես էլ չպատմեց հայրս, բայց մի բան գիտեմ միայն, որ նա Հայաստանի տարբեր քաղաքների որբանոցներում էր եղել: Իրենից մեկուկես տասնամյակ առաջ այդ որբանոցներում ապրած Գ.Մահարին հետագայում իր «Ինքնակենսագրականի» մեջ պիտի գրեր, «1915թ. ես էջմիածին ընկա, հետո՝ Դիլիջան, հետո՝ Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց մահճակալից մահճակալ…»:

Երբ Հովհաննես Շիրազի կյանքն եմ ներկայացնում, որ մատնվելով որբության՝ իր նման հարյուրավոր անապաստանների հետ սկզբից ևեթ ճանաչեց կյանքի

հատակը, մատբերում եմ հորս պատմածը, որ ադրբեջանական հայաշատ Կիրովաբադ քաղաքում /Գանձակ/ , որդեն աշխատունակ, անապաստան նախկին որբանոցային սանը իր փաստաթղթերում աշխատանքի դիմաց փոխված պիտի տեսներ հայկական «յան» վերջածանցը: Բայց «ովը» չկարողացավ տանել իր վրա, այն պիտի դառնար նորից



Վանա լիճ

«յան», որ պապենական տոհմը չեղծվեր, այլ դառնար մի մեծ տոհմածառ:

Այդ դասաժամին հասկանալի է, որ ինձ մոտ նոր հնչեղություն պիտի ստանային մեծ բանաստեղծի տողերը.

Ղարաբաղըմորս կանչն է,
Ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է,
Կարմիր, բայց սև ունի սրտում…

Բանաստեղծ Չարենցի «դաբթեական դժոխքի» հարցումներն են հնչեցնում իմ դասերին. «Ո՞վ հնարեց պատերազմը, ո՞վ դարձրեց կյանքը «թարախակալ երազ» ո՞վ հնարեց այս որբերին, ո՞, ո՞վ…»:

Այդ դասերին ինքնաբերաբար հիշում եմ նաև 92-ի ծանր օրերը, երբ առաջին անգամ զգացի պատերազմի հոտը: Հարազատ գյուղում էինք այդ օրերին /Մոխրաթաղ/, երբ ռմբակոծությունից հետո մշուշված աչքերիս առջև գետնին փռված տատիս հաշմանդամ հարևանուհու դիակը…

Երբ 1915թ. Մեծ եղեռնից փրկված գաղթականների մասին եմ խոսում, նորից վերհիշում եմ նույն 92-ի բռնագաղթի օրերը, երբ ես ինքս էլ ոտաբոբիկ, ընտանիքիս հետ անտառամիջյան արահետով փորձում էի մայրաքաղաք տանող փրկության ճանապարհը գտնել…Եվ հառնում է իմ առջև մոտակա գյուղերից եկող «գաղթականների» ստավարացող խումբը, դրանց մեջ քայլելուց հոգնած 84-ամյա տատիս գունատ դեմքն եմ հիշում, որ փոձում էինք փչկել պատերազմ կոչված «դահիճից»: «Ավելորդ» մարդ չկար մեզ համար այդ օրերին, «ավելորդը» Դեմիրճյանի հերոսուհին էր՝ Սրբունը, որի մասին խոսելիս հիշում եմ նաև ինձ շատ ծանոթ մարդկանց, ովքեր չկարողացան «լքել» իրենց օջախը և հենց այդտեղ էլ կուլ գնացին դաժան պատերազմին:

Երբ հանձարեղ Սևակի պատգամն եմ հղում իմ աշակերտների մոտ. «Դու այսուհետև ժողովվես պիտի Նախ՝ ինքդ քո մեջ, Եվ ապա՝ քո շուրջ…», փորձում եմ նոր լույսի տակ արծարծել հայրենիքի և ժողովրի միավորման նրա տեսակները:

Մեր հայրենիքը մեզնից դատարկվեց:
Բայց…ոչ մի վայրկյան, ոչ մի ակնթարթ
Մենք չենք դատարկվել մեր հայրենքից:
Մենք սպանվեցինք մեր հայրենիքում,
Բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց:

Սփյուռքահայ գրող Շ.Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպն ուսումնասիրելիս լավ եմ հասկանում, թե որքան ցավոտ ու արդիական է հնչում գրողու ահազանգը սփյուռքահայերի ձուլման վտանգի մասին: Այն այսօր էլ հնչում է որպես հայությանն ուղղված զգաստացման կոչ: Այդ ստեղծագործությունն գրելիս Շահնուրին մտահոգում էր ոչ միայն հայության ներկան, այլև ավելի շատ՝ ապահան:

Այսօրվա նահանջողներն են սպանում վաղվա հայ սերունդը: Ուծացման, ձուլման ճանապարհով քայլող վաղվա սերունդն այլևս հայ չի լինելու: Սա է մեծագույն ողբերգությունը, և այդ պատճառով Շահնուրը մարտահրավեր նետեց նահանջողներին:

Բռնահաղթից հետո օտար ափերում ապաստանած տարագիր հայուհու կյանքն եմ ճաշակել և շատ լավ էի հասկանում Շահնուրի մտահոգությունը:

Խարտյաշ և բարձրասրունք գեղեցկուհիների հմայքը շատ մեծ էր, և ավանդապաշտ հայ ընտանիքների որոշ զավակներ իրենց մեջ ուժ չէին գտնում դիմադրելու այդ հմայքին:

Մի՞թե նույն մտահոգությունը չեմ ունեցել նաև ես, երբ օտար ափերում՝ հայրենիքի շg հեռու, ռուսական դպրոցի 2րդ դասարան հաճախող դստերս / միայնակ եմ մեծացրել/ փորձում թի հայերենը հնչեցնելով՝ հեռու պահել սպասվող վտանգից:

Որքա~ն լավ եմ հասկանում օտարության մեջ հայրենիքի կարոտով տառապած Իսահակյան գրողին, որ երբ նրա պանդխտության երգերից եմ խոսում, օտար երկնքի տակ բախտ որոնող «փախստականի» իմ կյանքն եմ հիշում: Եվ իմ հիշողության մեջ կրկին ուրվագծվում է բռնագաղթի ճանապարհը, ու հայրենիքից հեռու «օտար

ՇՈՒՇԻԻ ԿԻՐՃՈՒՄ

Ճիշտ է, ես 9-րդ դասարանից դուրս եմ եկել Բերձորի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցից և ուսումս շարունակում եմ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջի դիզայնի բաժնում, սակայն մտովի միշտ իմ դասարանի հետ եմ, իսկ Բերձոր գալուս դեպքում այցելում եմ դպրոց, մասնակցում դասերին: Վերջերս մեր դասարանցիները որոշել էին այցելել մեր երկրի որևէ գեղատեսիլ կամ պատմական վայր: Հայրս, որ լավ է ճանաչում Քաշաթաղի և Շուշիի շրջանները, առաջարկեց մեկօրյա հանգիստն անցկացնել Շուշիի կիրճում՝ Հունոտի ձորում, որտեղ պահպանվել են հնամենի տներ, կամուրջներ: Մեր դասղեկի և առաջին ուսուցչի հետ Սայաթ քեռու մեքենայով դուրս եկանք Բերձորից և հասանք Մխիթարաշեն կոչվող գյուղը: Այստեղից ճանապարհը պետք է շարունակեինք ոտքով: Նախորդ գիշեր տեղացած անձրևից ճանապարհը ցեխապատ էր, բայց եղանակը բարենպաստ էր: Մեզ դեպի Հունոտի ձոր ուղեկցեց Մխիթարաշենից Սևակ անունով մի երիտասարդ: Ընտ-

րեցինք մի բացատ, որտեղ պետք է հանգստանայինք: Սակայն շտապում էինք որպե առաջ տեսնել Հունոտի ձորի հրաշքներից մեկը՝ հավերժ կանաչ քարանձավը, որի վրայով ջրվեժ է իջնում: Մի արահետով շարժվեցինք առաջ: Ճանապարհի մի մասն անանցանելի էր, և ստիպված անցնում էինք Կարկառ գետի միջով: Վերջապես հասանք տեղ. երկու գերան գետի ափերը կապում էին իրար: Մտնում ենք քարանձավ: Դարերի ընթացքում բնությունը գեղատեսիլ ու հետաքրքիր քանդակներ է արել քարանձավի առաստաղին ու պատերին: Ներսում էլ կարծես անձրև էր մաղում, իսկ քարանձավի մուտքը պատված է ջրե վարագույրով: Երկար ժամանակ ուսումնասիրում էինք քարանձավը, տարածքը, լողացանք գետում և վերադարձանք հիանալի տպավորությամբ: Իր վեհությամբ ու գեղեցկությամբ ավելի հմայիչ էին կիրճի ուղղաձիգ, բարձրաբերձ ժայռապատերը, որոնք նաև արծվաբներ են: Գետի ձախակողմյան ժայռապատից չնայած բարակ, բայց գեղեցիկ ջրվեժ է իջնում, իսկ քիչ ներքև միջնադարյան բերդապարսպի երկու բուրգ առավել գեղեցիկ ու տպավորիչ են դարձնում տեսադաշտը: Այստեղ նաև քարե կամարակապ կամուրջ կա, որտեղով ժամանակին Վարանդայի զինվորներն ու բնակիչները դեպի բերդ են բարձրացել: Մի պահ պատկերացնում եմ, թե ինչպես էին 1992 թվականի մայիսի 8-ին հայոց քաջերը բարձրանում ժայռն ի վեր և մեր պատմական հայրենիքից դուրս քշում թշնամուն: Հայրս ասում է, որ նաև այլ ուղղությամբ էին գրոհում հայոց քաջերը: Օրը մոտենում է ավարտին. դուրս ենք գալիս Շուշիի կիրճից՝ տպավորված գեղատեսիլ բնությանբ ու մեր պապերի կառուցած կամրջով, քարե տանիքներով շինություններով: Բայց մեր էքսկուրսիան շարունակվում է: Հաջորդ կանգառը Շուշի քաղաքի Ջըդըրդուզ կոչվող տարածքն էր: Հազարավոր սպիտակ ծաղիկները, հիմնականում երիցուկներ, չքնաղ տեսարան էին ստեղծել, իսկ վերևից արդեն այլ կերպ էր դիտվում կիրճը: Սպիտակ ծաղիկներից ծաղկեպսակներ ենք հյուսում, լուսանկարվում: Մայրամուտին Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու գմբեթը